

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ 1898 ԻՆ

Քաղաքական շատ բեղմնավոր տարի մը վերջացաւ: Անոր միաձոյլ ամբողջութիւնէն անջատելով ինչ որ ուղղակի անշուքութիւն ունի Հայոց դատին հետ, քանի մը Կժմով մեր ընթերցողներուն յիշողութեանը ներկայացնենք:

Կրեալի ազատութեան վերջին դրուագները Արեւելեան խնդրին նշանաւոր մէկ էջը կը յօրինեն, եւ մեծամեծ յոյսեր տածելու իրաւունքը կուտան թիւրքիոյ ամէն ջրիստոնեայ ժողովրդի:

Յունաստանի Երկիրս իշխանը 1897 փետրուար 10ին քանի մը թորփիլակրով Պիրլոնէն կը մեկնէր ու կ'երթար Կրեալ, ապստամբ կզդին մայր-հայրենիքին միացնելու առաջադրութեամբ: Երոսպական մարտանաւերը առօք փառօք ետ կը վարձնէին արքայազուն զրաւիչը: Քիչ ետքը Յունաստան թիւրքիայէն յաղթուելով, սուլթանը իրեն հպատակ ջրիստոնեայ ո' եւ է փաշա մը Կրեալի կառավարիչ անուանելու զիջողութիւն կ'ընէր, իբր նշան «վեհանձնական բարեացակամութեան»: Եւ ահա յանկարծ 1898 յունուարին Ռուսիա Կրեալի կուտակութեան ընտրելի կը ներկայացնէ թիւրքիայէն պարտուած Յունաստանի թագաւորին գաւազը, այն միեւնոյն Երկիրս սուր տարի մը առաջ Կրեալի ջուրերէն ետ էր ճամբուեր: Ետ չանցած սակայն՝ Աւստրիա եւ Գերմանիա իրենց զրահաւորները հեռացնելով Կրեալէն, Արեւելեան խնդրին համար կազմուած համաձայնութիւնէն իրենց անջատուած կը յայտարարէին գործնականապէս: Ռուսիա իր առաջարկած ընտրելիին պաշտպանութեանը նպատակաւ ո' եւ է նշան մը ցոյց չէր ի տար: Այս պարագաներէն սուլթանը հաւատաց թէ յաջողած էր Երոսպայի խաղ մը խաղալ, ու զեց վերջին հարուածով մըն ալ պարտաւորել միացեալ նաւաստանները թիւրքական ջուրերէն հեռանալու: 18)8 սեպտեմբեր 8ին թիւրք զինուորները կրետացի իսլամի սարազով կը յարձակէին անղլիական զօրքերուն վրայ, եւ անոնցմէ մէկ քանին կը սպաննէին: Չորս Պետութիւնները համբերութեամբ իրենց սպասած առիթը գտան: Այդ զեպքէն ամիս մը ետքը թիւրք զինուորները եւ թիւրք վարչութիւնը բռնութեամբ գուրս նետուած էին Կրեալէն, սր այլ եւս թիւրքիոյ մաս չէր կազմեր: Ու Երկիրս իշխանն ալ Պետութիւններուն ներկայացուցիչը կը կարգուէր:

Այսպէս ահա 1898ին կը ջնջուէր 1895ին մեր զրմբազդութեանը համար հաստատուած երոսպական համաձայնութիւնը: Ու միանգամայն քաղաքականութեան դաւանանք մը ըլլալէ կը դադրէր Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Պ. Հանթոյի 1896ին Երոսպայի ընդունելու առած այն հաւատաւոր թէ թիւրքիոյ մէջ բարեկարգութիւններ պահանջուած պահուն սուլթանին վրմ' ո' եւ է ճնշողական միջոց ձեռք պիտի չառնուի, Պետութիւնները միաբան գործակցութեամբ եւ ոչ իսկ առեւտար պէս պիտի իշխեն օսմանեան հողերուն ո' եւ է մէկ մասին վրայ, ու անխոս պիտի պահուի թիւրքիոյ ամբողջութիւնը: Կրեալի պաշարումը, չորս պետութեան հոն տիրապետութիւնը, ու Երկիրսի անուանումը, սրուն համար սուլթանին հաւանութեանը պէտք չզգացուեցաւ, դամբանականը եղան համաձայնութեան մը որ երեք տարի թիւրքիոյ ջրիստոնեաներուն մահաբեր ու Երոսպայի ամօթաբեր քաղաքականութիւնը եղաւ:

Արեւելեան խնդրին մէջ երոսպական քաղաքականութեան բարեշրջումը պետութիւններէն սմանց նախորդ սրխաշնորուն սրբազրութիւնն է: Լն մեծ սխալողը Ֆրանսա եղաւ որ Արեւելք սնեցած իր թէ' նիւթական եւ թէ' բարոյական բոլոր շահերը վտանգեց, արտաքին գործերու նախորդ նախարար Պ. Հանթոյի անհեռատես աշխարհավարութեամբը: Հիմա Ֆրանսայի բոլոր խորհուրդ մտքերը կ'ըմբռնեն երեք տարուան սխալներուն անշափութիւնը: Իբր դարման այդ անցեալին ե իբր ապահովութիւն ապագային, Ֆրանսա տրամադիր կ'երենայ իր ձայնը ազդուապէս լսել տալու թիւրքիոյ այն ամէն գործերուն մէջ որ ջրիստոնեաներուն վիճակը խնդրի առօրկայ է: Արտաքին պաշտօնատան հիմակուան վարիչ Պ. Տէլքասէ այդ քաղաքականութեան գործադիրը ըլլալ կ'երեւի:

Քաղաքագետներէ շատերու կարծիքովը վիշկիմ կայսեր արեւելեան ճամբորդութիւնն ալ սխալ մը եղաւ: Որքան ասան որ Գերմանիա ձեռքի ներքեւ կը գործէր, իր քաղաքականութիւնը չափազանց վտանգաւոր չերեցաւ, բայց գերման կայսեր յաղթական մուտքը իսլամութեան քաղաքական եւ ջրիստոնէութեան կրօնական մայրաքաղաքները՝ մէկէնիմէկ արեւելեան երեւակայութիւնը ի նպատ Գերմանիոյ բորբոքեց: Կառավարութիւններէն աւելի Ֆրանսայի եւ Ռուսիոյ ժողովուրդները յուզուեցան:

Նիւթական շահերու հետ կը մտանդուէին կաթողիկոսութեան
և օրթոտօրոսութեան շահերը բողոքականութեան փայլովը:
Ֆրանսա եւ Ռուսիա իրենց միմաքնած լոյսը նորէն փայ-
լեցնելու համար պէտք կը գզան վերստին ստանձնել թիւր-
քիոյ բրիտանեաներուն պաշտպանութեան դատը:

Մինչ ֆրանսայի մէջ ծանրախոհ հանդիսներ կը բըն-
նէին իրենց կառավարութեան վերջին երեք տարուան սը-
խախտը եւ նոր ուղղութեան մը պէտքը զգացնել կու տա-
յին, ուստիան թերթերն ալ սկսան ի նորսա Մակեդոն-
նիոյ և Հայաստանի ձայն բարձրացնել: Ու Նիքոլա կայս-
րը երբ Լիվաթիա կուզար, իր էջ Պոլսոյ դեսպանը Պ. Չի-
նովիկի անոր մօտ երթալէ առաջ Գրան խիստ ծանուցա-
ղիր մը տուաւ Մակեդոնիոյ և Հայաստանի բարեկարգու-
թիւններուն համար: Թիւրք պարզամտութիւն մը ըն-
ծաներով բեանաւորուած ձարին բարի գալուստ մաղթելու
գնաց Լիվաթիա, եւ ահա կայսեր բերնէն լսեց ինչ սը ա-
նոր դեսպանը արդէն յայտարարած էր Պոլիս: Պատգա-
մաւորութեան վերադարձին՝ Աւստրիոյ դեսպան Պառն տը
Քալիչէ թիւրք կառավարութեան կը ներկայացնէր միեւ-
նայն պահանջումները որ արդէն իր ուստ պաշտօնակիցը
բրտաւ էր: Յայտնի էր սը Ռուսիոյ արտօքին գործերու նա-
խարար կամ Մուրափիկի վիեննա ըրած վերջին ուղե-
բութեանը համաձայնութիւն մը գոյացուցած էր Աւստրիոյ
հետ Արեւելեան խնդրին համար: Այս համաձայնութիւնը
հիմնուած կ'իւրեւ բարեկարգութիւններու ներմուծումին
սկզբունքին վրայ: Աւստրիա իր ներքին տաքնապալից
խնդիրները ունի, եւ Ռուսիա շատ զբաղած է Մայրաքաղաք
Արեւելք: Իրենց այժմ նպաստաւոր չէ թիւրքիոյ մէջ
բազարական տաքնապանքով Արեւելեան խնդրին կնճո-
տումը:

Այսպէս ուրեմն զանազան շահեր, քաղաքական նկա-
տուներ միանալով պարտաւորիչ կ'ընեն ի նպաստ թիւր-
քիոյ բրիտանեաներուն բարեկարգութեան խնդրին գոնէ
առեւմտայ կարգապահութիւնը:

Պետութիւններու այս պահանջումը կը համապատաս-
խանէր օսմանեան նախարարութեան արդի տրամադրու-
թեան: Կ. Պոլիս հանդիսատես եղաւ երեւոյթի մը որ քսան-
երեք տարուան բանապետութեան օրով հրեք երեւան ե-
կած չէր: Շէյխ-իւ-իւլաժը եւ գառական գործերու նա-
խարարը օսմանեան գահընթիւն գումարութիւն մէջ բարե-
կարգութեան հարկը զգացնել տուին, ահոնի ապագայ
մը զուշակելով արդէ վիճակին շարունակութեամբը: Ներ-
կայացուած ծրագիրն էր՝ բարեկարգութիւն ապակեցրոնա-
ցումի զրուծումը: Բնականաբար սուլթանը պիտի մ'ընդ-
նէր, նախարարները ուղեց փոխել, բայց չգտաւ ոչ ոք որ
արդի զրութեան անփոփոխելիութեանը համամիտ գտնուէր:
Նոր եւ մտանդաւոր կացութիւն մը կը ստեղծուէր սուլթա-
նին համար:

Արգարես Կրիստի խնդիրը սոյլ եւս չափը լրացողցած
էր: Պատերազմի մը մէջ յաղթել եւ առանց բան մը շա-
հելու մեծ կղզի մըն ալ վրայ առլը տարօրինակ նորու-
թիւն մը երեւցաւ թիւրքերուն: «Այսպէս ահա, կը խոր-

հէին, երբ յաղթուինք պատերազմի մէջ՝ պիտի կորսնցը-
նենք, առ բնական է. բայց երբ յաղթենք՝ դարձեալ պի-
տի կորսնցնենք, ու երբ պատերազմ չընենք՝ նորէն վրայ
պիտի տանք, ինչպէս Կիպրոսը, Հերսէլը, Պոսնիան:»
Ու իրենց մտքէն սուլթան Համիտի թագաւորութեան հաշ-
ուելիչիւր ընելով գտան թէ կորստին կողմն է Կարս, Պա-
թմա իրենց շրջականերով, Պուլկարիա, Կիպրոս, Հեր-
սէլ, Պոսնիա, Եգիպտոս, Կրեաէ, Հայկական եւ մակե-
դոնական խնդիրներու ծագումը, Եւրոպայի եւ Ամերիկայի
մէջ մարդասպան ժողովրդի համբաւ, բարոյական և նիւթա-
կան սնանկութիւն: Իսկ շա՛ն կողմը՝ ոչինչ շուշափելի:
Համիտ խելացի (?) թագաւորի համբաւ կը վայելէ. բայց
երկրին վիճակը ուրիշ է՝նչ պիտի կրնար ըլլալ անխելք
վեհապետի մը օրով: Բազմաութիւնը ամէնուն մտքին
կը ներկայանայ. թիւրքերն ալ կը սկսին փորձուիլ խոր-
հելու թէ այսքան խմաստութիւնը կը բաւէ, բէջ մըն ալ
լիմարութիւնը ձեռք առնենք:

Ուրեմն 1898 թուականը մեղի լուրջ յոյսերու ժա-
ռանգութիւն մը ձգելով կը վերջանայ: Պէտք է յիշենք թէ
բարեկարգութիւններու խնդիրը 1894ին վերջիւր բացուե-
ցաւ Սասունի կոտորածով. սարի մը ետքը դեռ խնդիրը
չէր լուծուած, ընդհակառակը աւելի սաստկացած էր թիւր-
քական նորանոր բարբարոսութիւններով. երբ 1896 թը-
ւականը կը լինար այդ միեւնոյն խնդիրը հզօր պաշտպա-
նութիւն գտած էր ամբողջ Եւրոպայէն. վեց պետութիւն-
ները միաբանութեամբ թիւրքիոյ ընդհանուր բարեկար-
գութեան ծրագիր մը կը պատրաստէին. հելլենական-թիւրք
պատերազմը արդեւ եղաւ այդ ծրագրին գործադրութեա-
նը. 1897 թուականը իբր դադարի ժամանակ մը կը ներ-
կայանար, բայց միջնարար էր, եւ ահա 1898ին վերջե-
րը հարցը ուժեղացաւ ևւեան կուզայ, շատ մը նպաստա-
ւոր պայմաններով շրջապատուած: Յուսալիր ուրեմն կը
մանենք նոր տարին, չմոռնալով սակայն թէ լրջախոհ աշ-
խատութեան ծանր պարտականութիւնը աւելի քան երբեք
կը ծանրանայ ազգին վրայ: Հայ ժողովրդին ամէն գասա-
կարգիւր սիրով ու համերաշխութեամբ մէկ ծրագրի մը ի-
րականացումին հետամուտ ըլլալու են: Ազգին փրկութիւ-
նը ազգային մէկ ծրագրով և միասիրտ աշխատութեան կա-
խում ունի: Լաւատես ըլլալը ներքի կը համարենք, եւ
յուսանք թէ պատրանք չկրենք:

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ
ՇՐՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

7

Արիւնի քոչակակը. — Մատենիչեկոտ պատիժ. — Ա-
նեղ դժբաղդուրիւն մը. — Հրոսախոսմբի պատրաստոչ,

րիշն. — Թիւրքի մը մարդասիրութիւնը. — Դաւադրու-
րիշն:

Արմուտանի յեղափոխական շրջանակին զիւզիրուն
համար արիւնի օրերու թուական մը կը բացուէր: Հետզ-
հետէ մասնիչներ կը պատձուին, Թիւրքեր կը սպաննուին,
ձերբակալութիւնները իրարու կը յաջորդեն, կախազանք
կը բարձրանայ յեղափոխականներու համար, հայ հրո-
սակը հրացանը ուր լեռները կը սուրայ:

* *

Լին զիւզէն Պետրոս Պուտակեան սը՝ ինչպէս նա-
խօրդ զլին մէջ տեսանք՝ տասներկու Հայ մասնաձև կը,
կը պատուհասուի տասնըութ տարեկան Ճինկօ անուն
ակնցի պատանիի մը սուրէն: Սպասելով Ալին Լին տա-
նող ճամբուն վրայ՝ Ճինկօ պաշտօնի հարուածով մը կը
վերաւորէ մասնիչը սրուն մէկ ձեռքը մինչև հիմա քաշ-
ուած կը մնայ: Իսկ պատանին Ակը հանգիստ կ'անցընէ
ամբողջ ձեռքը:

Արմուտան կացութիւնը օրէ օր կը ծանրանար: Չս-
րեպան Էօմկըր սպաննող Սարգիսը հանկէ հեռացնելու
պէտք զգացուեցաւ, ուստի անիկա խրկեցին Տիւրքի սը
ընկերներէն ուրախութեամբ ընդունուեցաւ: Հոնտեղուանքն
ալ գործ կար: Յեղափոխութեան առաջին կազմակերպու-
թեան հետ մասնիչներու խումբ մըն ալ բուսած էր. ասոնց
զուտը ջախջախելու հարկը անխուսափելի էր: Սարգիս
Տիւրքիի մէջ ցորեկ ատեն վերաւորեց Հայրանեանը, եւ
կրտսն զեզն ալ ուրիշ մասնիչ սպաննելէ յետոյ ուզեց
անցնիլ Չիմառայ եւ հոն ալ սարսափեցնել գաւաճանները:
Չորս նշանաւոր մասնիչ կային Չիմառայ, Դուկաս ու
կինը, Նարինեան ու որդին Մկրտիչ: Սարգիս ընկերով մը
պէտք ունէր. Նաթան անունով տասնըինը տարեկան պա-
տանի մը միացաւ իրեն: Համբաւաւոր ժիրայրի աշակերտ
էր աս տղան որ զեռ աւելի պզտիկ տարիքին Թիւրք մը
սպաննած էր:

Սարգիս ու Նաթան ձմրան զիշեր մը ճամբայ ինկան
զեպի Չիմառայ: Երբ զեղը մտան աչքերնուն հանդիպած
առաջին սունը Դուկասինը եկաւ. Սարգիս ուզեց նա'ն
անոր զօրձը լինցնել եւ ստակները կոտորուել: Բանտար-
կեանի հրու աղատութեան համար դրամի անհրաժեշտ
պէտք կար: Դուկասի տան զուտը բացին. կէս զիշեր էր.
էրիկ-կնիկ կը քնանային լուսերնին վառած. աղմուկէն
արթնալով սենեակին զուտը կը վազեն. Սարգիս լուտը կը
մարէ ու Դուկասին եւ կնոջը օձիքէն պինդ մը սեղմելով
Նաթանին կը պոռայ շուտով հարուածել. պատանին սըր-
տին բոլոր ուժովը թափ կ'անէ եւ պաշտօնը կ'իջեցնէ:
«Նաթան, ի՞նչ ըրիր» կ'աղաղակէ Սարգիս: Արիւնը իր
երակներէն կը վազէր: Հարուածը փոխանակ Դուկասին
երեսին գալու, սարգիս եւ անոր օձիքէն բոնող Սարգիսին
ձեռքէն էր հանդիպեր:

Հիմա երկու ընկեր ձգել երթալէ ուրիշ բան չունէին.
բայց սըր Չիմառ ամէն կողմ՝ ծաղկած էր. ու բնականա-
բ սը Դուկաս ամբողջ գեղը ստքի պիտի հանէր: Դուրս ե-

լան զժողովները եւ ուզեցին Արմուտան երթալ. բայց ա-
րիւնը կը վազէր վերաւորեալին բաղկերակէն, ստքերը կը
թուլնային, ու ժամու մը չափ առաջ երթալէ յետոյ ա'լ
ուժասպառ ինկաւ: Պահանջեց Նաթանէն ձգել զինքը ու
ազատիլ. ա'լ իր բանը լինցած էր: Բայց անիկա չուզեց
երեսի վրայ թողուլ ընկերը. շարկեց ու տարաւ մտցա-
նիւրու տակ հանդիպուց. եւ երբ լուսնալու մօտ էր ինք
գնաց ժայռերու վրայ կ'ու, դոնէ ինքզինքը պաշտպա-
նելու:

Առտուն Դուկաս, կինը, Նարինեան եւ աղան Մկր-
տիչը Թիւրքերն ալ հաւաքելով սկսան զիշերուան այցե-
լուները փնտռել: Սարգիսը շուտ գտան ու շորի մը վրայ
դրած զեզ տարին: Ուրիշ հեռքերը կը մասնակի Նաթանի
ապաստանարանը, զոր շուտով պաշարեցին: Նաթան ը-
վովէր կը պարպէր ու չէր թողուր ոչ ոք իրեն մօտենայ:
Այս պահուստ արդէն Տիւրքի լուր խրկուած էր եւ ոտի-
կաններ կուզային. Նարինեան Մկրտիչ առանց անոնց
ժամանումին սպասելու կը յառաջանայ զեպի Նաթան եւ
կ'ըսէ. «Խե՛նդ ես, ի՞նչ կ'ընես. մենք Հայ ենք. տես
զէնք կը նետե՞նք քեզի. մենք քեզի ազատելու եկած ենք.
Սարգիսն ալ շորի վրայ բեռցած գաղանի գորտանելու
աարինք. քեզ ալ պիտի փախցնենք:» Նաթան Մկրտիչը
չէր ճանչնար. ու շուտով, հաւատալով իր ազգակցին
խօսքերուն, եկաւ քովերնին: Մկրտիչ իր ձեռքովը տա-
րաւ Նաթանը թիւրք ստականներուն յանձնեց:

Կ. Պոլիս 1895ին երիտասարդ մը Հնչակեան Մառ-
նաճիւզին զիմելով զբաժանական անջնկեցութեան ինչորեց
մասնիչ Պէրիան Մամբէն սպաննելու համար: Պատան-
խան ստացաւ թէ՛ «Վատերու հետ գործ չունինք. մեզի
մարդ չի պակսիր Մամբէ մը սպաննելու համար:» Այդ
երիտասարդը զիմեց ուրիշներու, հինգ սակի առաւ, Մամբ-
բէն սպաննեց ու ինքն ալ կոտորու անցաւ: Նարինեան
Մկրտիչն էր, Չիմառայի մասնիչը, Նաթանը բոնող
Թիւրքերուն յանձնողը: Խեղճ Նաթանը յետոյ Սեբաս-
տիա կ'ախուսեցաւ. առաջին նահատակն էր: Վայրագ
խօսքով փաշա չուանը իր ձեռքովը անցուց Նաթանի վիզը:

Հոգեվարք վիճակի մէջ Սարգիսը բանտ տարին ու
շուտով հարցաքննութիւնն ալ սկսան. խեղճը կը զոտոն-
ցէր. մէկ ու կէս ժամ ետքը վախճանեցաւ՝ ստքերը պըր-
կող ծանր շղթաներուն փաթթուած:

Տիւրքիցիները մարմինը բանտէն առին ու եկեղեցի
տարին եւ նահատակի փառաւոր հանդէսով թաղեցին եւ
կեղեցիին բակը: Ամբողջ ժողովուրդը սուղի մէջ կուլար:

* *

Այդ ձեռքը բոլոր կարեւոր յեղափոխականները բան-
տըն էին. միայն Պէրիան ու Նշան պատուելին ազատ
կը մնային քանի մը ընկերով: Անոնց համար ալ վառնող
ժօտալուտ կ'երեւնար, ու փախուտի հարկը անխուսա-
փելի. ուստի փութով ռազմավթերքի սպառաքանութեան եւ
հրոսակախուժի կազմութեան հետամուտ եղան: Տեղացի
արհեստաւորի մը ուժը շինել տալով լեռը փորձեր ըրին.

արդիւնքը յաջող էր: Կրցան նաև Լազերու միջոցաւ քա-
նի մը Մարթինի հրացան գնել: Այդ ատենները Բինկեա-
նի ճամբով յեղափոխական մը եկաւ, ու սորվեցուց ուս-
քի մէջ զրուելիք պայթուցիկ նիւթի մը պատրաստութիւնը:
Այդ յեղափոխականը ապահովութեան համար Չիմարա
խրկուեցաւ, բայց հոն Նարինեան Մկրտիչէն մատնուե-
ցաւ, ու երբ Բինկեան գնաց՝ զինքը ձերբակալեցին:

Գարնան մօտերը Ակնէն Մովսիկ Արմուտան եկաւ
ու զեղը մնաց յոյն բանտորի լաթերով: Երբեք արհես-
տաւորները յոյն են այդ կողմերը: Խորհեցան ապահով
պահարան մը շինել, և կարեւոր բաները հոն պահել, ու
ի հարկին ալ հոն ապաստանիլ: Գեղէն քառորդ մը հեռու
ձորի մը մէջ պատուելին աւույտի արտ մը ունէր. հոն
գտնուած սէքիմը ծայրէ ծայր նորոգեց, ետեւի կողմէն
կամար մը կապեցին պատին մէջ, պատին հաւասարու-
թեամբ ալ քարեր դրին, որոնք երբ վերցնէին կամարը ե-
րևան կուգար. ու Մովսիկ անկէ անդին ալ փորելով
լայնացուց. սէքիմին վրայ ալ աուույտ ցանեցին: Եւ այսպէս
անցայթ թաքստոց մը պատրաստած էին:

Նոյն միջոցներուն Ակնէն եկաւ Ճինկօն ալ, և միա-
ցաւ Պէյլերեանի խումբին. իսկ Մովսիկ խոհեմութիւն
համարեց հեռանալ, վասն զի զեղին մէջ ուշադրութիւնը
շատցած էր:

Ճինկոյին Ակը վերադառնալը հարկ եղաւ. ճամբան
գիշերը ծանօթի մը տուն մտնելով հոն կը գտնէ ընկերնե-
րէն Գարեգին ու Հրանտ որոնք ահաբեկիչ գործողութիւն
մը կատարած ըլլալով կը փնտուռէին կառավարութեան
կողմէ, ու եկեր ատ տունն Աին ապաստանած: Ճինկօ
կ'աննէ անոնք Արմուտան բերելու հրոսակախումբին մաս-
նակցութեան համար: Չաթըյի գետին կէս ժամ մնացած
Քիւրտերը ասոնք կը տեսնեն, միւտիւրն իմաց կուտան
ու բազմութեամբ ետեւնուն կ'իյնան: Գետը թէև գարնան
յորդառատ է բայց Հայերը հանուելով մէջը կը նետուին,
փամփուշտ, հրացան, ըկվալը շապիկնուն մէջ կ'անակնին
կապած, և լողալով կ'ազատին: Յերեկը արտ մը պահ-
ուըտելէ յետոյ գիշերը, շապիկնին միայն վրանին, Պաս-
ուելիին սունը կուգան: Նոյն գիշերը իսկ ասոնց զգեստ
հագցնելով կը խրկեն Ս. Եղիայի սարը:

Այդ միջոցին հաճի Գէորգ Պոյսճեանը, որ Պուրէն
մասնութիւնները բրած էր, միւտիւր կը կարգուի, օգտակար
ճառայութիւններ սպասելով անկէ: Պէյլերեան ու Պատուե-
լին թէև անոր հակառակորդ էին բայց օգտակար սեպե-
ցին տեսութեան երթալ, յուսալով կարեւոր տեղեկու-
թիւններ ստանալ: Եւ արդարեւ միւտիւրը ասոնց ցոյց կու-
տայ հեռագիր մը որով Ճինկօն, Գարեգինը և Հրանտը
Արմուտան փնտուռու հրաման տրուած էր: Միւտիւրը ի-
րեն այցելուններուն ալ աշակցութիւնը կը խնդրէ ատ վա-
սակար ու խոտվարար անձերը գտնելու և կառավարու-
թեան յանձնելու համար:

Պէյլերեան ու պատուելին մեկնելով հաճի Գէորգ Պո-
յսճեանի քովէն, ուղղակի Ս. Եղիայի սարը կ'երթան և
կ'իմացնեն միւտներուն իրենց լսածը, զգուշաւորութեան

հրահանգ կուտան, և միանգամայն գտնուեց կը փոխադրեն
Ապուշայի սարը, ուր կը գտնուէր արդէն Եէկէն Պաղտա-
սարը: Յիտունը անցած մէկն էր այս վերջինս, երբեմն
Արմուտան այգենիններու պահապան, ու թիւրք մը սպան-
նած ըլլալուն Կիլիկիա փախստական, երկար բացակայու-
թենէ յետոյ նորէն Արմուտան վերադարձած, վերջին ձեր-
բակալուողներուն մէջ, ու կաշառքով ազատուած:

Լեւը ապաստանողները շարաթ մը ետքը լազի լաթ
հագած էին. Ճինկօ քիւրտի տարագով կը նմանէր քիւրտ
պէյի մը տղուն. չորսն ալ զինուած էին Մարթինիով, ու
փամփուշտանոց, փամփուշտ ունէին: Առնական գեղեցիկու-
թիւն մը առած էին և կուուելու անհամբեր: Բայց հարկ
էր սպասել: Պաշարնին հատած ատեն լեռնէն վար կ'իջ-
նէին, ու իրենց ընկերներուն պատրաստածը կը տանէին:
Գիշեր մըն ալ սրտերնին նեղանալով զեղ կուգան և հաճի
Կարապետին պարարտ գառը բաղէն յափշտակելով լեռը
կը տանին կ'ուտեն: Ո՛չ որ բան մը կ'իմանայ: Աս գէպ-
քին վրայ հաճի Կարապետ փնտտուքի պէտք կը տեսնէ:
Միշտ միւտիւրին հետ կասկածած էր թէ փախստականնե-
րը պահողները պատուելին ու Պէյլերեանն են, և թէ
դոտին յափշտակութիւնը անոնց խորհրդով է: Մաղաք-
եանին փուռը վառուած օր մը հաճի Կարապետ խորհե-
լով թէ իր գառը անպատճառ այդ փուռը պիտի եփի մարդ
կը խրկէ լրտեսելու. գառ չի կար թէև բայց կը զարմանան
որ Պատուելին ու Պէյլերեան իրենց ձեռքովը պաշար կը
պատրաստեն: Հաճի Կարապետ և միւտիւրը բանի մը
թիւրք և հայ որոշեալ տեղեր պահուողու կուտան որպէս
զի եթէ հրոսակները, ինչպէս կը գուշակէին, վար իջնեն
ասոնք հանդիսատես ըլլան: Ու արդարեւ այն գիշերը պի-
տի գային պաշարնին առնելու. երբ կ'երեւան այդ զինեալ
կտրիճները, անոնք լրտեսողները ահաբեկ կը մնան. ձայն
հանելու չեն համարձակիր: Միւտները ատանց ո՛ր և է
կասկածի պաշարնին առնելով կը վերադառնան տեղերնին:

Ալ տարակոյս չի կար թէ կառավարութեան փնտտու-
ները Արմուտանի մօտերն էին, ու անոնք պահողներն ալ
Պէյլերեանը և Պատուելին եղած էին: Միւտիւրը, հաճի
Կարապետ, հաճի Ճանիկ, պատուելի Քիւրտիւրէ Բեռնեան,
և յեղափոխական վարչութեան երբեմն ետեւողուն անգամ
Սերովբէ Բեռնեան իրենց շատանց պատրաստած ճրագի-
րը գործադրելու ատենը հասած կը համարին. թիւրքերն
ալ իրենց օգնութեան կը կանչեն:

Եւ ահա յիշատակելու արժանի երեւոյթ մը. տեղին
նշանաւոր թիւրքերէն մէկը, Շաքիր էֆէնտի, տեղեկա-
նալով գաւին, իրեն մարդասիրական պարտականութիւն
կը համարի Պէյլերեանի և Պատուելին իմաց տալ թէ ինչ
վտանգ կը սպառնայ իրենց, որմէ անոնք անզիտակ էին:

Խեղճ Նշան պատուելին ձեռագրէն ամբողջապէս ա-
ռաջ կը բերենք իր սրտէն բղխած հառաչանքները երբ
պատմութիւնը կը դրէր.

«Շաքիր էֆէնտին էր որ վտանգեալներուն իմաց տը-
լաւ, մարդասիրական պարտք համարելով իրեն. իսկ այդ
Հաճի, Հաճի՛ և Հաճի՛ աղաները, Սերովբէ և Բեռնալ

Քեօսեանները սիրայօժար մատնեցին իրենց ազգակիցները, բանտի խորերը ասոնց թիւը պակաս ըլլալուն. եւ իրենց խզծի խայթ մը չունեցան արդեօք մինչեւ ցայսօր. անոնցմէ մին միայն սննցաւ, որ տեսնելով սխալը բանտի մէջ մտածելէն զերեզման մտաւ: Ո՛վ վա՛ աբարածներ, եթէ ազգասիրութիւն չունէիք, մարդասիրութիւն ալ չկար բովերնիդ, զէթ Շաքիր էֆէնտի չափ: Անոնք (յեղափոխականները) զիշերը ցերեկին հետ խառնած ձեր եւ ձեր նմաններուն ապագայ ինքնապաշտպանութեան համար կը խորհին. ինչո՞ւ զուր կացինը առած ձեր պարտէզին պըտղատու ծառերը շարդելու կ'աշխատիք: Փոքրիկ պատմութեան մէջ 8-10 զեղերու որո՞նք մէջ պակաս տեսաք հայեր որ իրենց չեղան պատճառ իրենց հայրենակցաց, եւ ի՞նչ խանգով եռանդով մը որ նոյն իսկ գործին տէրերը (թիւրքերը) չունեցան:»

* * *

Միւս օրը յունիս 4, միտիր հաճի Գէորգը փոքր-Արմուտան կ'երթայ քննութիւն բանալու զիշերուն երեւցողներուն վրայ: Նպատակն էր սակայն Պէյլերեանը եւ Նշան պատուելին զբաղեցնել մինչեւ որ հաճի կարապետ մամանակ սննեայ երթալ կառավարութեան կեդրոնավայրէն պէտք եղածին չափ զօրք բերել եւ ձերբակալութիւնները ընել:

Հոս Նշան պատուելին քանի մը ասոյով հայ զեղացիին կեանքի եւ աշխատութեան նկարագրութիւնը նետած է իր յիշատակներուն մէջ: Առանց զգալու արուեստաշէտ մը եղած է պատուելին, ախրութեան ներշնչումէն: Աստուան լուսուն ուրախ զուարթ աշխատող երկրագործ հայ զեղացիին պատկերին քով գտն հեգնութեան մը հակապրութիւնն է հաճի Գէորգինը, հաճի կարապետներու մութին մէջ զաւարտութիւնը: Ու այդ հակապատկերը կարծես աւելի կը խտացնէ մեղամաղձութիւնը որ այլ յիշատակներէն կը բզիկ. իր բարբ անարուեստ պարզութեամբը արտայայտեց այդ նկարագրութիւնը:

«Յունիս 4եր. զեղեցիկ պայծառ օր: Ա՛լ հող սրբո՛ր սկսած է իր ամբողջ տարուան թափած քրտինքին արդիւնքը ստանալ: Գաշտերու մէջ մէկ տեղ կը նայի: Ֆիկ կը բաղն, եւ սրիշ տեղ մը գարի: Անուշ երգերու ձայներ կը լսուին օրայ կըսող մանչերու բերնէն, սրտնք շարիներու եւ ձիերու բռնալով խորձերը կամ խոտի տըցակները կը բերեն վար կ'առնեն կաշին մէջ: Ան ամսուն հողագործին ծերն ալ, երիտասարդն ալ, տղան ալ եւ հիւանդն իսկ գործ սննի: Որը՝ կերակուր կը պատրաստէ զաշտ խրիկու, որը՝ խոտ կը զարձնէ շորցնելու, որը՝ փոքր մանուկը զիրկը առած ամանիսին վրայ կը հսկէ հոն փուռած թութին, պատտեխին, ու պարկուկի, խնձորի եւ տանձի շարերուն, ամաններու մէջ լեցուած թութէ մեղրին: Ոչեւորութիւն մը կայ որ մարդ չտեսնալով չի կրնար երեւակայել: Շատ պարզ կեանք մը կայ հոն. զեղջկական ամէն մարդ իր գործով կը զբաղի, սիրտը հանգիստ եւ ուրախ: Ո՛չ իրար բամբասելու միջոց կայ, ո՛չ վէճ, ո՛չ կռիւ: Այդ օրը մի-

միայն միտիր հաճի Գէորգը եւ հաճի կարապետը հանազիտ չէին իրենց ստացա՛յ զաւանանի զերը կատարելու համար:»

Աս պայծառ ատուուն Պէյլերեան վազան եւ Նշան պատուելին կանուխէն Ակնաձոր գացին իրենց պատրաստած գաղտնի տեղը մէյ մը այցելելու: Այդ թաքտոցը աւելի կը սիրէին քան իրենց բնակած տուները: Այդ գաղտնի պահարանին կողմը կորիի մը չափ տեղ սուսյտ ցանուած էր. սրկիչով շրեցին եւ ուրախ էին որ ա՛լ լաւ մը բուսած էր սուսյտը, ու ոչ ոք կը կասկածէր անոր տակ գաղտնի պահարան կ'ենալը: Յետոյ արտերու մէջէն քալելով գարձան գեղ, ուր երբ հասան, տեսնելով թէ զեղին զգիրը անհամբեր իրենց կը ապառէր: Իմացուց որ զեղին միտիրը եկեր է, Հայրանեաններուն տունը նստած է եւ քննութիւն կը կատարէ. զիշերը զինեալ մարդիկ եկեր ու պատուելին տունը մտեր են, տեսնող եղեր է: Պէյլերեանին եւ Պատուելին կը սպասէր միտիրը: Ասոնք երչոյրն ալ ըկովովրնին լեցուցած ելան գացին: Միտիր հաճի Գէորգ սոքի կ'ելլէ եւ «բարի եկաք» ըսելով յարգալից ընդունելութիւն կ'ընէ: Շատ բնորոշ է միտիրին կեղծաւորական ինքնարդարացումը որ կը սկսի սապու. «Եղբայրներ, պաշտօնիս բերմամբն է որ կը հարցնեմ. ստիպեալ եմ, ի՞նչ ընեմ. ետեւիս հսւր առջեւիս շուր. մենք ալ չենք զիտեր ընելիքնիս:» Ու կը շարունակէր: Վկայութեան կանչուողները զբեթէ բոլորն ալ կ'ուրանային: Սակայն քննութիւնը պարզ ձեւակերպութիւն մըն էր մամանակ շահելու: Տեսնելով թէ գործը կ'երկարի Պատուելին ու Պէյլերեան զուրս կ'ելլեն: Գուռը երկու պահպան կեցած էին, հաճի Գէորգին արամագրութեան տակ զբանուողներէն: «Մէկը ո՛վ ըլլայ ազկի, կը գոչէ յիշատակարանը գրողը, — մեր սիրելի ընկերը, Քեօսեան Սիւրովէն, վարչական մարմինն վառուուն անդամներէն մին: Ու երբ Պէյլերեանին ելլելը զուշակեց հեռացաւ, իբր թէ սիկստան վառելու:»

Երբ երկուքը փողոց ելան ու աճապարանքով կ'երթան ին՝ Շաքիր էֆէնտի իրենց հանդիպեցաւ եւ առանձին տուն մը տանելով զաղտնաբար իմացուց որ կարապետը այն օրը կեդրոնական իշխանութեան (մէքէզ) գացած է, հետեանքը լաւ ըլլալու չէ:

— Առչափ կ'ըսեմ, աւելին զուր կրնաք զուշակել, կ'ընէ ատ իսլամը ու կը շարունակէ. «Ես աս տղան կը սիրէի բայց աչքէս ելաւ: Գուր ձեզի կ'ընէք եւ ձեր զրացի թիւրքերը պատճառ կը բռնէք:»

Շաքիր էֆէնտին մեկնելէն յետոյ Պէյլերեան ու Պատուելին զուրս ելան, իրենց տունները երթալու եւ պէտք եղած պատրաստութիւնները տեսնելով աներեւութանալու համար: Պատուելին տուն կը հասնի, բայց Պէյլերեան ճամբան ձիերու տրոփիւնը լսելով կը հասկնայ թէ հաճի կարապետ զօրքերը բերել տուեր է, ուստի պարտէզ մը նետուելով կը պահուրախ: Պատուելին ալ տունէն ելլելուն կը լսէ յիսնապետին ձայնը որ «զգէր», «մուխթար» կը

պոռար: Կը հասկնայ թէ ա՛լ ամէն բան վերջացած է. ինքն ալ պարակզ մը կը նետուի:

Յիսնապետ մը յիտուն ձիաւոր զօրքով եկած էր: Խուզարկութիւններ կը կատարուին Պէլլերեանի և Պատուելիին տուները. բայց անօգուտ: Ու ա՛լ յոգնած իրենց հանգիստը կը նային զօրքերը. զեղացիները անոնց ուսելիք եւ ձիանին դարի հայթայթելու ետեւէ կ'ըլլան: Փախստականներուն վրայ մտածող չի կայ: Թիւրք զօրքերը երբ հայ զեղ մը կ'իջնեն՝ մէկ շարժուման չկերածնին կ'ուզեն ուտել:

Գիշերը երբ կը հասնի, երկու պահուցողները առանձինն առանձինն ճամբայ կ'ելլեն, առանց իրարմէ անդեկութիւն ունենալու և կը զիմեն գէպի Ալինաձորը, իրենց պատրաստած թաքստոցը: Հո՛ն իրար կը գտնեն. «Ա՛լ հասանք ցանկալի օրերուս, կ'ըսեն. փա՛ռք: Եւ յաջողութիւն միանգամայն:» Ու հիմա պէտք էր շուտով պատրաստուիին, իրր հրստակ գործելու համար:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՄԱԿԱԲՈՅԾՆԵՐԸ

ՔՄՔԱԳԻՐԸ

Կարճուկ, շատ կարճուկ մարդ մը: Քառակուսի, կատարելապէս քառակուսի զէմքով մը, որուն ճակատը թուշին կը միանայ ուղիղ, բացարձակապէս ուղիղ գծով մը: Քիչ մը պեխ, աղտոտ հագուստներ, պզտիկ շուն մը ետեւին, ու ահա՛ նոյն ինքն է պարոն Զաքէոս:

Զինքը ճանչցայ թիւրքիոյ ապիկար կառավարութեան շնորհիւ ծնունդ առած պոլքանեան պիտութեան մը բաղբին, — մեղայ, մայրաքաղքին մէջ:

Երբ իրեն հետ տեսնուելու պատիւը ունեցայ, արզէն խմբագրութեան սկսած էր եւ իր թերթին, «Համերաշխութիւն»ի, երկրորդ թիւը շարելու վրայ էր: Ախ, այդ գիշերը շարելու գործսովինը, ինչ ամենջանքներ տուած էր իրեն: Հագիւ յաջողած էր գտնուլ նախկին գերատան մը, որ լուսանկարչութիւն կ'ընէր այդ բաղքին մէջ, համոզելու համար զինքը որ իր կոչումը զրաշար բլլալ է: Նախկին գերատանը, որ տասնհրեքերու անդամ բլլալով իր անունը փոխած եւ Փայլակեան յեղափոխաշունչ անունը առած էր, հաւանք էր իր աջակցութիւնը նուիրել այդ թերթին, որուն իրր թէ նպատակն էր միութիւն առաջ բերել մեր յեղափոխական կուսակցութիւններուն մէջ:

* *

Սեպտեմբերին, իրիկուն մը, Պ. Զաքէոս բռնեց օձիքէն ու ստիպեց որ միասին երթանք գարեջուր խմելու առանձին տեղ մը, քաղքէն գուրս, հեռուոր պարտէզի մը մէջ:

— Քանի՞ տարիէ ի վեր հոս ես, հարցուցի իրեն, երբ կ'երթայինք ճառագարդ ճամբէ մը զէպի մեր նպատակակար:

— Տասնչորս տարիէ ի վեր:

— Ինչո՞ւ ձեզեցիր Պոլիսը:

— Ախ, իմ պատմութիւնս երկար է: Պոլսէն փախայ ճիշդ այն միջոցին ուր զիս տասներհինգ տարուան տաժա՛նակիր աշխատութեան պիտի գատապարտէին: Եւ գատապարտեցին՝ «ի բացակայութեան»:

— Վատերը, զոչեցի, ի՞նչ սուտ ամբաստանութեամբ քեզ գատապարտեցին: Յեղափոխական գործի համար:

— Չէ՛, պատասխանեց Պ. Զաքէոս, չէ՛, այն ատեն զեռ յեղափոխութիւն չի կար. պարզապէս... հրձիգութեան համար:

— Վատերը, ի՞նչ սոսկալի զրպարտութիւն:

— Զրպարտութիւն չէր. անհերքելի վկայութիւններ կային ինձի վրա:

Լոցի: Դեմին «անկեղծ» հրձիգ մըն էր:

Լուսութիւնը՝ որ տեսց մեր մէջ՝ պաղ էր, ինչպէս հո՛ւր որ կը փչէ գեկանմբերին, Աթէնքի մէջ, Հիմկ լեռան կողմէն:

— Պոլսէն փախայ, շարունակեց Զաքէոս, եւ գացի թրիւթի, անկէ եկայ հոս ուր կը գտնուիմ առանչորս տարիէ ի վեր:

— Ինչպէս թերթ հրատարակելու գաղափարը ունեցար:

— Մարդ մը որ կը ծնի պէտք է ապրի մինչեւ իր մեռած օրը, պատասխանեց Զաքէոս վճռաբար: Եթէ հրձիգութեան փորձս յաջողէր, զիտաւորութիւնս էր Պոլսոյ մէջ նպարտվածառի խանութ մը բանալ. գորադպարար չեղաւ: Երբ հոս եկայ, քովս բիշ մը ստակ կար, անով վիժագրատուն մը հաստաւեցի եւ սկսայ ապրիլ: Արդ, վիժագրատունէն խմբագրութիւն բայլ մը միայն կայ եւ այդ բայլը առի շնորհիւ խաղապրէկեանի:

— Խաղապրէկեանի՞:

— Այո՛, Խաղապրէկեանի, զոր հոս ճանչցայ և որուն «Զանգակ» թերթին հասցնեցրը ես կը գրէի: Այն ատեն տեսայ որ ատ մարդը, ինէ աւելի վարպետ, հրձիգութեանէ շահաւէտ գործ մը գտած էր՝ յեղափոխական թերթ մը հրատարակելով եւ կուսակցութիւն կազմելով: Բայց Խաղապրէկեան տիրած էր հրապարակին եւ անկարելի էր հետը մրցիլ: Հիմա, կուսակցական երկպառակութիւններուն պատճառաւ, յարմար ատենն էր մէջտեղ նետուելու եւ նետուեցայ:

Ինչպէս կը տեսնաք, Պ. Զաքէոս անկեղծ էր իր խօսքերուն, ինչպէս հրձիգութեան մէջ:

* *

«Համերաշխութիւն»ի երրորդ թիւը հրատարակուեցաւ եւ հեղհեղեղ, ամէն ամիս, կանոնաւորապէս թերթերը լոյս կը տեսնէին: Թիւրք յաջողութիւն կը գտնէր. աշխարհքի շորս կողմէն «Համերաշխութիւն» կ'ուզէին եւ

եթէ այսպէս շարունակուէր, խեղճ Չաքէոս, հագուանե-
րէն ետքը, կօշիկն ու զլխարկն ալ ծախելու պիտի ստիպու-
ուէր թերթը հրատարակելու համար, որովհետեւ « Համե-
րաշխութիւն »ը... ձրի կը արուէր եւ ճամբու ծախքը խրմ-
բազրութեան վրայ կը...

Այո՛, Պ. Չաքէոս սր թէեւ Աւետարանի իր անուա-
նակցին հասակը ունէր, բայց ս'չ անոր հարստութիւնը,
իր յոյսը դրած կը նուէրներու վրայ միայն: « Թերթը ձրի
է, բայց նուէր շնորհակալութեամբ կ'ընդունինք », կը զը-
րկը առնն ատեն, մինչ « Համերաշխութիւն »ի համակիր-
ները թերթը կ'ուզէին... բայց նուէր չէին զրկեր յաճախ:

— Ախ այդ խաղապէկեանը, նուէրի աղբիւրները
բոլոր իրեն կը բաշէ տակախն, կը գոչեր խեղճ Չաքէոս,
երբ ձեռնթափ կը դառնար նամակատունն, ուր հերոսա-
կան անպարտելի յոյսով մը կը շարունակէր երթալ օրը
երկու անգամ, նոյնիսկ երբ վստահ կը թէ թղթաբերը ե-
կած չէ:

Ու նուէրները սր կուգային ցանցաւ ցանցաւ, չեմ
զիտեր ի՛նչ հրաշքով, ճղճիմ բաներ էին: Երեք ֆրանք
Պուլկարիայէն, կէս տոլար Ամերիկայէն, հինգ զրուշ Ե-
զիպատսէն, զորս գանձելու համար ամօթով կը յառնար՝
խեղճը՝ զրամը վճարող պաշտօնեային սր ծաղրական ժը-
պիտ մը շրթունքին վրայ կուտար իրեն, ողորմութեան մը
պէս, այդ ֆրանքները, կամ կէս տոլարը, կամ հինգ
զրուշը:

* * *

Որո՞ւ պիտի բաւէին այդ եղճուկ նուէրները. խուսա-
նկարչութիւնը ձգող նախկին զերասան զրաշարին օրա-
կանննրը վճարելու, տպագրչին պահանջը կարգադրե-
աւ, Քստրոթրոնիս փողոցը գտնուող սափրիչին լեզակ
Լաչքերով կնոջ՝ Էլէնիի՝ տարիէ մը ի վեր խոստացուած
գուպաները գնելու, ճաշարանին հաշիւը մաքրելու, տան
վաճաքը տալու, շունին ոսկո՞ր գնելու, որո՞ւն պիտի բա-
ւէր երեք ֆրանքը, կէս տոլարը կամ հինգ զրուշը:

Ու Չաքէոս՝ յուսահատ՝ « Ապերախտ ազգ » գոչելով
թղթատունէն կը մեկնէր գանձած քիչ մը զրամովը ու
շունչը կ'անէր զինետուն, ըստ խրատու առակողին թէ
« Օղին կորուսելու վրայ եղողին ու զինին դաճահողինե-
րուն տուէք, սր անոնք խմեն ու իրենց աղքատութիւնը
մոռնան ե իրենց նեղութիւնը մէյ մըն ալ չյիշեն: » Երբեմն
մեզի ալ կը հրաւիրէր:

— Եկէ՛ք սանկ բանի մը հատ ճնկենք, անանկ ալ
կործանեցայ անանկ ալ:

Ու այս փիլիսոփայական մտածումով զօրացած կը
մտնէր զինետուն, ուր ըլչինան՝ այդ Հոմերոսէն երգուած
զինին՝ կը մոռցնէր պահ մը իր կեանքին տխուր իրակա-
նութիւնները:

Հո՞ն սեղանին առջեւ, մեծ ու պզտիկ տակառներու
զրացնութեամբ, Չաքէոս կամաց կամաց կը խանդավառէր
ու կը սկսէր անկեզճ շատախօսութեամբ մը զուրս տալ
սրախն մէջ եղածները:

Գեկանմբերի մէջ, ցուրտ ու անձրեւոտ իրիկուն մը,
երեք բարեկամ նստած էինք նպարտվաճառ—զինետան մը
անկիւնը երբ Չաքէոս ներս մտաւ յաղթական ձեւով մը:
— Բէչինա՞ թէ ուզօ, գոչեց խօսքը մեզի ուղղելով,
երբ սեսաւ սր սեղաննուս վրայ տակախն դաւաթներ չէին
երեցած:

— Բէչինա:

Հարկ եղած հրահանգները աալէ վերջ եկաւ քո-
վերնիս:

— Թղթատունէն կուգաս կար, հարցուցինք:

— Չգեցէք սա թղթատունը, պսոաց Չաքէոս արհա-
մարհոս ձեւով մը թեւը կէս մը բարձրացուցած:

— Ուրեմն ինչպէ՞ս պիտի խմենք ըլչինան:

— Արարկիրցի հարուստ մը, շարունակեց Չաքէոս,
սր հոս կը գանուի եզեր, գործ մը ունեցեր է պանքային
հետ ու լեզու չղիանալուն ստիպուեր է պալ զիս փնտսել
որպէս զի մէկտեղ երթանք գործը կարգադրենք: Գացինք
կարգադրեցինք. մարդը հանեց տասը ֆրանք նուէր տուաւ:
Ըսի իրեն սր ես երբեք նուէր չեմ ընդունիր, բայց « Հա-
մերաշխութիւն »ի համար կ'ընդունիմ: « Ա՛ն աէ ինչի հա-
մար կ'ուզես առ » ըսաւ ու ձգեց գնաց: Ես ալ ութ ֆրան-
քը տպագրիչին սուի ու երկուքն ալ մեր Միշօլին պահեցի:
« Մեր Միշօն » զինեպանն էր:

* * *

Երբ ըլչինային առաջին շիշը պարպուեցաւ, Չաքէոս
զլխարկը գէպի ետեւ քշեց, քիչ մը ճակատը քերեց, ձեռ-
քը զարկաւ սեղանին ու գոչեց:

— Ո՛ւշ հասայ, ո՛ւշ: Ե՛թէ վեց եօթը տարի առաջ
գործի սկսի հիմա զիրքս շինած էի: Ես ալ եղած էի խա-
ղապէկ մը...

— Նորէն կ'ըլլաս, մի՛ յուսահատիր:

— Չէ՛, ա՛լ լինցաւ. կը տեսնամ սր ժողովրդին աչքը
բացուեցաւ... ա՛լ առջի միամիտները չեն: Տեսնելու բան
էր խաղապէկին հոս եղած ատենը, երբ միասին բոսթան
կ'երթայինք, ամէն կողմէ անձրեւի պէս կուգար զրամները,
շարաթը երբեմն հարիւր ոսկի կ'ըլլար... հարիւր: Միշօ՛,
սա շիշը վերցո՛ւր եւ ուրիշ մը բե՛ր:

Չաքէոս շարունակեց:

— Ախ, այդ տեղատարափ նուէրներն էին սր իմ ալ
զլուխս պարձուցին: Այն օրերէն միաքս զրի ես ալ յեղա-
փոխական թերթ հրատարակել, կուսակցութիւն կազմել
ու այդ նուէրներուն գոնէ հարիւրին տասը ձեռք անցընել:
Հիմա չափս առի:

— Կամաց կամաց:

— Է՛հ, եթէ քիչ մը զրամազլուխ ունենայի տարի մը
զիմանալու չափ, բայց, ա՛խ, չէք զիտեր վիճակս: Ամէն
օր նոր նոր պարտքեր ընելու վրայ եմ, ա՛լ քաղքին մէջ
մարդ չպիտի մնայ սր ինծի ապառիկ տայ: Երէկ խաճու-
թիս տէրը վերջնականապէս ըսաւ սր ամսուս զլխուն եթէ
պարտքս չվճարեմ՝ զիս գուրս պիտի նետէ...

— Բե՛ր սա գաւաթդ լեցունիմ:

— Աս «Համերաշխութիւն»ը խերս անիծեց, մէջքս կուտրեց, եղբայր: Քանի մը ոսկի խնայողութիւն ըրած էի ան գնաց... պարաքի սկսայ, եւ ինչ խայտառակ պարտքեր, հինգ զրուշ մէկէն, տասը զրուշ մէկալէն... քեփապի եղանք ամենուն քով: Չեւք մը նոր լաթ ունէի ան ալ ծախեցի, «Համերաշխութիւն»ը հոս հասցուց ինծի: Նա յեցէ՛ք սա բանթալոնիս ու բալթոյիս վիճակը, սա՛ գլխարկըս... հապա՛ կօշիկներս... ոտքս ջուրերուն մէջն է: Տարի մը առաջ տեսնալու էիք ինծի, զեռ մարդու շնորհք կար վրաս... հիմա կ'աժնամ կոր հայելին նայելու... ապերախտ ազգ: Միչօ՛, սա շիշը վերցուր ուրիշ մը բեր:

Ա՛լ լոնց:

Գրգռուած էր ու տիրութիւն մը եկած էր վրան, այն անասի մը ծանր տիրութիւններէն սրոնք երբեք կ'իխան հօգիին վրայ ու կը ճնշեն զայն: Լուրձեամբ պարսպեց վերջին շիշը:

— Այս իրիկուն ընչինան փոխանակ քեզ զուարթացնելու աւելի տխրեցուց, ըսի:

— Այս՛, պատասխանեց վհատ ձայնով մը, մասնիշը... ան ալ զիս լքանել սկսաւ:

Ոտքի ելանք: Դրարեղային առջեւ Չաքէոս մաքրեց ընչինաներու հաշիւը. կէս փրանքի չափ աւելցաւ:

— Քոնեաք մը սո՛ւր: Հատ մըն ալ:

Երկու քոնեաքը երբ խմեց փողոց ելանք: Չաքէոս սկսած էր սայթաքել:

Դուրսը, տխուր, անձրեւոտ զիշեր մըն էր, ցո՛ւրա, յուսահատական:

— Գիշեր բարի, ըսաւ Չաքէոս ու մխրճեցաւ՝ գայթի գայթ՝ զիմացի փողոցին մէջ, մինչ անձրեւը կը ծեծէր իր ազտատ գլխարկը ու հին լաթերը: Իր շունը՝ Գանելան՝ պոչը կծկած ետեւէն կ'երթար...

* * *

Հիմա երկու տարին ետքը աչքիս առջեւն է անասւորանը: Դեկտեմբերի այդ անձրեւոտ պա՛ղ զիշերը, ու կարծուկ ստուերը Չաքէոսին որ պատն ի վեր, կաշի յարաշարժ լոյսին տակ, խօշական ձեւեր կ'առնէր, ու այդ չա՛ր անձրեւը որ կարծես անձրեւոց չունեցող զուխնեւրուն վրայ կ'իջնայ՝ յատկապէս՝ անգութ յամառութեամբ մը, ու տունը նահատակ իր տիրոջ փառատենչ անուրջներուն՝ Գանելան՝ որ գուցէ օրն ի բուն ոսկոր չէր զատած կրծելու եւ որ հիմակ, ջուրին տակ խխում եղած, կը հետեւէր՝ սոսյիկ համակերպութեամբ մը՝ իր տիրոջ, որ գայթ ի գայթ կ'երթար պատն ի վեր:

— Խեղճ Չաքէոս, ըսինք ամենքս միաբերան երբ ջրաթաթաւ ստուերը ա՛լ խառնուեցաւ մթութեան հետ:

Տղէտ, անխելք, նիւթապէս անկարող, ֆիզիքապէս անշնորհք, ամէնէն արհամարհուած, երկչոտ մարդ մը՝ անձանօթ մնալու բոլոր օգուտներով օժտուած, որ ինքզինքը յանձնարարելու համար բան մը չունի, որ իր ոչընչութեան զիտակցութիւնը ունի եւ որ սակայն կ'ուզէ հանրային դեր մը խաղալ, թերթ հրատարակել, կուսակ-

ցութիւն կազմել, հրամանին տակ մասնաճիւղներ ունենալ, հրահան գներ տալ եւ... նուէրներ առնել, վերջապէս մակարոյժ մը, բայց մեծիմի մակարոյժ մը ըլլալ: Արդարեւ խեղճ մարդ:

Իր անյաջողութեան պատճառները երբեմն կը փնտրուէր Չաքէոս. — «Նախ ժողովուրդը առջինը չէ, կ'ըսէր. յետոյ ես գէշ ըրի. գործի սկսելէ առաջ պէտք էր սարիի մը չափ գաւառները երթալ, սանկ, ինչպէս ըսեմ, նախ կ'իմ գործիչի համբաւ մը շինել եւ ետքէն թերթ հրատարակել: Յեղափոխական կեանք չունենալս շատ ախտեկուտայ կոր ինծի... Ասկէ զառ, շիտակը ըսեմ, հասակիս կարծութիւնը եւ կզակիս ձեւը գործը կ'արեւն կար. սո՛ւր էր որ երկայնահասակ մէկը ըլլայի, առատ մագերով, խոշոր մօրուքով... խաղապրէկին պէս բան մը: Յետոյ, յետոյ... մէ՛յ մը Ժընէլ գացած չըլլալս... Ինչ կ'ըլլար, փոխանակ թրիւթիւնն ուղիղ հոս գալու, Ժընէլի ճամբով գառնայի... ան «սոցիալ-դեմոկրատ»ի պէս բառերը տեսա՛ր մի, ահա՛՛ անոնք են քոսկներու բանալիները, անոնք նուէր բերողները...»

— Անոնց ալ մօտան անցաւ, պարսն Չաքէոս: Գալով հասակիդ, Յուլիոս Կեսար, Նարոլէն առաջին, պարսն թիւն, անոնք ալ կարճահասակ էին...

— Այրած սրտի մխիթարանք... ես ըսածս զիտեմ: Տե՛ս անցած օր ինչ պատահեցաւ: Սրճար սնընտած էի, եկան զիս փնտուցին ըսելով որ երկու շնորհքով մարդ «Համերաշխութիւն»ի հրատարակիչը տեսնել կ'ուզեն անպատճառ: Լուրը բերողը ըսաւ որ նուէր տալու խօսք են ըրեր: Խենթի պէս վագեցի խանութն: Քիչ մը ետքը պիտի գան եզեր. վերջապէս եկան:

— Ո՛ւր է պարսն Չաքէոսը, «Համերաշխութիւն»ի հրատարակիչը, հարցուցին ինծի:

— Ես եմ, պատասխանեցի:

— Դուն... դուն թե՛րթ կը հրատարակես, ըսաւ մին կէս մը խնդալով:

— Այս՛, հրամայեցէ՛ք նստեցէք, սուրճ մը առեք:

— Ո՛չ, շնորհակալ ենք, ստիպողական գործ ունինք, մնաք բարով, յաջողութիւն կը մաղթենք:

Ու ելան գացին:

Ետքը իմացոյ որ ծանօթներէն մէկուն ըսեր են. «Միտք ունէինք նուէր մը ընելու, բայց, շիտակը, իր կերպարանքին չհանեցանք. առ մարդը ինչպէ՞ս խըմբազրութիւն կ'ընէ:»

— Կերպարանքիս չեն հաներ, անպիտաններ, փեսայ փնտուելու եկաք թէ նուէր տալու... զարմացիք են թէ ինչպէ՞ս խմբազրութիւն կ'ընեմ... կարճահասակ մ'որդը խմբազրութիւն չի կրնար ընել... սանգուիի մը վրայ կ'ելլա՛մ ու անանկ կ'ընեմ խմբազրութիւն... ապերախտ ազգ:

* * *

Երկու տարի է որ մեկնած եմ այդ քաղքէն ու չեմ գիտեր թէ «Համերաշխութիւն»ը զեռ կը հրատարակուի:

« Համերաշխութիւն » չկարգալս անշուշտ զրկանք մը չեմ համարիր ինծի համար, բայց անհուն ձանձրոյթի վայրկեաններուն որ կ'ունենամ երբեմն, կարօտը կը բաշիմ Չաքէասին՝ որուն տեսքն ու խօսակցութիւնը յաճախ զըւարթութիւն տուած են ինծի:

Բաշեաչօ մըն է որ ծերունի հօր զերը խաղալ կ'ուզէ. ահա՛ իր սխալը:

Անարգար եղայ իրեն նկատմամբ երբ յեղափոխութեան մակարոյցներուն մէջ գասեցի զինքը, իր նպատակը շեշտել ուզելով աւելի: Ստուգապէս՝ Չաքէաս յեղափոխութեան... զոհն է:

ՎԱՀՐԱՄ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Բ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՕՐԷՆՔԸ

Պարսկաստանն եւ օրէնք. Ինչ խոշոր հակասութիւն: Կարելի է օրէնք բարձր գործածել՝ երբ խօսքը Պարսկաստանի մասին է: Օրէնքը՝ ընչաքաղցութիւնն է հոս եթէ ոչ քմահաճոյքը, եւ ընչաքաղցութեան թիրախն է կաշառքը, զոր բնաւ չեմ վարանիր, որպէս թանձրացեալ մարմին մը, Պարսկաստանի իսկական տիրապետը անուանելու:

Չուրանանք սակայն թէ կայ օրէնք եւ օրինակիրը, զոր հասկցողներու թիւը շատ աննշան է, իսկ մեկնութիւնը ու գործադրութեան եղանակը՝ իւրաքանչիւր գործադրիչի կամքին թողուած: Այդ օրէնքը Շարիաթն է, արաբացի մարգարէին ժողովածուն որ իր դարաւոր շրջութաներուն մէջ կը պրկէ կը կաշկոնդէ պարսիկ ընկերութեան ապրելու ամէն կարգաւարքերը: Երկաթէ կաղապարն է ան որուն մէջ սեղմուած է Պարսկաստան: Հանգուցեալ Նասրէատին Շահը իր Եւրոպա ճամբորդութեան միջոցին ծանօթանալով արեւմտեան օրէնքներուն ու կարգաւարքերուն, ջանալիք եղաւ զարձին խորտակել այդ շղթան, քանզի այդ կաղապարը. բայց իր կամէութիւնները շուտով ցնդեցան, երբ իր գէմ գտաւ ամբողջ հոգեւորականութիւնը, Շարիաթի հաւատարիմ ու դամանաւանդապահը: Հետեւանքը միայն այն եղաւ որ Պարսկաստանի մէջ նոր կուսակցութիւն մը առաջ եկաւ, Բարեկարգիչներու կուսակցութիւնը, որուն գլուխը կանգնած էր Սատրազամը: Սակայն Նասրէատին շահին մահուընէն զրեթէ անմիջապէս ետքը, Սատրազամը կը հեռացուէր, մինչեւ այս օրերս, երբ, հոգեւորականներու ազդեցութիւնը տկարացած ըլլալով, նորէն պաշտօնի կոչուած է:

Երբ խօսքը Պարսկաստանի օրէնքին, եւ մանաւանդ օրէնքի գործադրութեան մասին է, մտրդ չի գիտեր ինչպէս պատկերացնէ զայն, երբ սահմանափակուած որոշ օրէնքներ չկան. մէն մի նահանգ, մէն մի գաւառ, կամ, աւելի ճիշդ, մէն մի գաւառուր պաշտօնեայ իր յատուկ եղանակը, հասկացութեան կերպը ունի, եւ ատ է օրէնքը:

Մեր նպատակը չէ բացատրել այստեղ Շարիաթի օրէնքը, այլ ցոյց տալ մէկ քանի խօսքով գործադրութեան ձեւակերպութիւնները, ապա շեշտել օրէնքներու գերագոյն վարիչ կաշառքին մասին:

Պարսկաստանի ո՛ր անկիւնն ալ ար գանուիք, շուկաներու մէջ կը տեսնէք զէս ու զէն փոխաթի վրայ ծալապատիկ նստած միրգան, իր տիպիս դաշաճը ե տաւառութեամբ առջին դրած, որոնք իր անբաժան ընկերներն են ուր որ ալ երթայ: Խնդրարկուն, բողոքարկուն կը ներկայանայ միրգային, որ անոր համար կը գրէ աղբրատչիւրը, վաւերացնելով զայն ինչպէս նօտար մը: Աղբրատչիւրը կը ներկայացուի կա՛մ մուշակախին, մօլլային, կամ հաքիմին, որոնք զրեթէ նոյնհետեայն ինչիւրը կը կարգադրեն կը լմնցնեն առանց ձեւակերպութիւններու, ի հարկէ որոշ բաժին մը ստանալէ յետոյ: Իսկ եթէ գատապարտեալը բողոք բանայ՝ շտապով սակայն գատաւորին բերանը քաղցրացնել, այն ժամանակ առաջին բողոքարկուն է որ կը գատապարտուի անպայման:

Պարսիկ պաշտօնատներուն վրայ զազափար մը ունենալու համար, ներս մտնենք անգամ մը: Օր մը պատեհութիւնն ըսեմ թէ զժբազգութիւն ունեցայ բարձր պաշտօնեայի մը զիւնատունը մտնելու: Դեռ զրան սեմին առջեւ, երբ կը պատրաստուէի գլխարկի հանելու, ինծի առաջարկեցին կօշիկներս հանել: Վերջապէս ներս մտայ: Ընդարձակ լայն տիպակաւան զարդարուած էր պարսկական ընտիր գորգերով: Վերեւի կողմը քաշախին (կրակարան) առաջ նստած էր զլիւաւոր պաշտօնեան, վերմակը ծունդերուն վրայ քաշած. կողքին ծնրալիւր կը գտնուէին մէկ քանի պաշտօնեաներ, իսկ քիչ հեռու միրգաներ՝ պաշտօնաթղթեր զրեւու ու պահելու եւ տաննադրութիւններ (եթէ կան) կազմելու համար: Ասիկա՝ բարձր պաշտօնեաներուն զիւնատունն է. հասարակ պաշտօնեաներ կամ մուշակախա՝ մօլլաներ ամէն գործ իրենց բնակարանին մէջ կը կատարեն:

Այս ամբողջ մտրդիւր առտուընէ իրիկուն տկնուած մէկ բանի մը կը սպասեն. — ո՛ր կողմէն պիտի գայ կաշառքը:

Նախորդ երկու յօդուածներուս մէջ յիշուած էին կաշառակերպութեան զէպքեր: Հոս օրինակ մըն ալ առաջ կը բերեմ, որ ընթերցողը տեսնէ թէ կաշառքը մինչեւ ո՛ր աստիճան բարձրացած է, մինչեւ անգամ արքայական պաշտան ալ ազատ ելումուտը ունի: Հէքեաթ չկարծէք պատմածս, թէև շատ կը նմանի հէքեաթի. ճշգրիտ պատմութիւն մըն է, ու միանգամայն որոշ զազափար մը կուտայ արդարութեան ձեւին եւ հետեւանքներուն մասին:

Մտազորք մը կը ներկայանայ Սպահանի կառավարիչ Շահզատէ Չելլի-Սալթանէին, որու մասին խօսեցանք արդէն, եւ կը յայտնէ որ սէյիտ մը (*) անիրաւած է իրեն,

(*) Սէյիտ կը կոչուին Մարգարէին ժառանգներ, թէև առանց թիւր հազարներով է՝ Պարսկաստանի մէն մի քաղքին մէջ:

յափշտակելով իր 200 թուման զրամը որ կը գտնուէր կանանչ քսակի մը մէջ: Զիլի-Սալթանէն իսկոյն կը հրաժայէ իրեն կանչել սէյիտը, որ բոլոր ուժովը կ'ուրանայ եղբրութիւնը: Եահարդին խորամանկութեամբ անոր ձեռքէն կ'անէ սաթէ համրիչը եւ ծառայի մը ձեռքով գաղտնաբար կը զրկէ զայն սէյիտին տունը, սը, ի տես համրիչին, ամենայն վստահութեամբ կը յանձնեն ինչորում կանանչ քսակը:

—Սէյիտ, զիտուս վրայ երկուս ըրէ որ գուն այդ անիրաւութիւնը չես կատարեր, մտադործին 200 թումանը չես խլեր, կ'ըսէ Զիլի-Սալթանէն:

Սէյիտը կ'երդնու:

Եահարդան այն ատեն բերել կուտայ պղնձէ ամանի մը մէջ եռացող ջուր, եւ կանանչ քսակին զրամները մէջը կը պարպէ: Զրին երեսը ընդհուպ իւզով կը լեցուի: Այն տարակոյս չի կար, իրա՛ւ մտադործին զրամն էր ատ: Սէյիտը կը կարմրի, ու զլուիը կը խոնարհեցնէ:

—Դուն, կ'ըսէ Զիլի-Սալթանէն, երկու մեծ յանցանք գործեցիր. նախ յափշտակեցիր խեղճ մտադործին ստակը, յետոյ զլուստ վրայ սուտ տեղը երդուընցար. ատ կը նշանակէ որ իմ կեանքս քու աչքիդ նշանակութիւն չունի: Կը ներեմ քեզի: Բայց, ի պատիժ, իմ ամէն մէկ ծառայիս սիրտի վճարես 200 թուման, իսկ կալուածներդ ու պատրաստ զրամդ ինձի հետ հաւասար պիտի կիսես: Ասով ամէն բան կը լինայ:

Սէյիտը անուանի հարուստ մըն էր: Զր կարող հակառակիչ կը համաձայնի: Բայց քիչ յետոյ թէհրան կ'երթայ եւ իր մնացած հարստութիւնը անգամ մըն ալ կիսեցիւ՛ր կը բողոքէ Եահին, եւ հրովարտակ մը կը ստանայ Զիլի-Սալթանէնն ուղղուած՝ որով Եահը անոր կը հրաժայէր կրկին սէյիտին զարձնել իր ամբողջ կալուածներն ու զրամը:

Եահարդին կը ստանայ հրովարտակը, կը համբուրէ ու զլուստ վրայ կը դնէ:

—Եա՛տ լաւ, ես կը յարգեմ հօրս հրամանը, կը դառնայ իր քովի մարդերուն, բայց կը զարմանամ թէ այս սէյիտը ինչ մեծ սիրտ ունի որ համարձակած է Զիլի-Սալթանէնն զմ բողոք բանալ: Ճա՛ւատ, կը կանչէ դահիճը, շատ կը բազմամ այդ սիրտը տեսնել անգամ մը. այս սէյիտը կը տանիս, կուրծքը զգուշութեամբ կը բանաս, սիրտը կը հանես, ինձի անգամ մը ցոյց կուտաս, յետոյ կրկին տեղը կը դնես. բայց նայէ որ կեանքին չզպչիս, նորէն թող երթայ իր կալուածներուն տիրանայ:

Քանի մը վայրկեան յետոյ, մատուցարանի մը վրայ, սէյիտին սիրտը շահողրիին առջեւ կը զրուր: Ու Զիլի-Սալթանէն այս անգամ խեղճ հանդուցեալ սէյիտին բոլոր կալուածներուն կը տիրանար:

Յաջորդ օրը Սպահանէն կարաւան մը կը մեկնէր զէպի թէհրան: Զիլի-Սալթանէն կ'երթար իր ստացած աւարը հօրը հետ բաժնելու, սրպէս զի հանդիստ խղճով կրկին իր պաշտօնին վերադառնայ:

* *

Երբ բարձրագոյն պաշտօնէութեան մէջ այսպիսի զեղծութիւններու ու կաշառակերութեան այսպիսի օրինակներու կը հանդիպինք, կ'երեւակայէք հարկաւ թէ ինչե՛ր կ'ընեն ստորին պաշտօնեաները: Ամէն երկրի մէջ օրէնքին գործադրութեան եւ հանրային կարգապահութեան հսկող մարմին մը կայ, ոստիկանութիւնը. սակայն Պարսկաստանի մէջ այդպիսի կազմակերպուած պաշտօնէութիւն մը սպասել զուր է, թէեւ կայ այդ պաշտօնը կատարողներու վահմակ մը, ֆարսաւանները:

Իւրաքանչիւր պաշտօնեայ, ըլլայ թաղամասանոց, սաարազամ, նահանգապետ, դատաւոր կամ խան, ունի իր ֆարրաշներու խումբը եւ իր ֆարրաշպաշին: Ասոնք ոչ թէ որոշ ուժիկ ստացող ծառայողներ են, այդ խումբ մը որ այդ պաշտօնը ընդունելով, իրենց աղային —տիրոջ— անուանը շնորհիւ՝ կը կողոպտեն հասարակութիւնը: Ֆարրաշը զանակ մը միայն ունի եւ երկու սուր աչքեր, որոնք բաւ են սարսափ ազդելու ամէն հանդիպողի: Իր հաղուստով բնաւ չի աարբերիր հասարակ բողաքացիէն: Ֆարրաշը կը շրջի ամէն տեղ, յանցաւորը չէ կարող վրիպել անոր աչքէն ու կռուիի հարուածներէն: Ֆարրաշն ձերբակալուածը ա՛լ գերի մըն է որ կ'առաջնորդուի զէպի աղային բնակարանը կամ աղային բանտը:

Ֆարրաշը Հայուն այն ժամանակ միայն կը մտանայ երբ իրեն հրամայուած է. բայց այդ հրամանը կը կատարուի անխղճութեամբ եւ բարբարոսութեամբ, որովհետեւ Հայը հարուստ է, զրամ ունի, տուն ունի, կալուած ունի: Մանաւանդ վերջերս, երբ «ղաշակ» (յեզափոխական) բռնելու պատրուակ մը երեւան եկած է, հայ ամբաստանաւոր կատարեալ նահատակ մը ու կողոպտուած մը կը դառնայ ֆարրաշին ձեռքը: Ֆարրաշներու խումբ մը կը մանկ ամբաստանեալ Հայուն տունը, կը ձերբակալէ ամէն արու, կը թալլէ, ամէն աչքի ինկած բան կը վերցնէ, եւ մինչեւ անգամ անկողին շալակը առած իր սունը կը զիմէ, յաղթական կերպով կ'նշը ներկայացնելով բերած աւարը, —Բաթըրա՛մ (բերի)— այնպէս ինչպէս պատերազմէն յաղթական գարձող զինուոր մը պիտի ըսէր —Յաղթեցի՛:

Կը յիշեմ ֆարրաշի մը ինձի ըրած բազմաթիւ պատմութիւնները իրենց կեանքէն: Ինչ ողբերկութեամբ կը պատմէր ինձի իրենց կատարած «կարծութիւնները»: Ահաւասիկ ատոնցմէ մին:

Ֆարրաշը խորունկ հառաչ մը արձակեց, չիպուիը անյագ կերպով ձծելով, ու դահիճի մը սանասարտութեամբ սկսաւ պատմել:

—Փիշեր մը խումբով Թաւրիզէն դուրս եկանք: Հաղի քիչ մը հեռացած էինք, հանդիպեցանք զինսպիտ պարսիկ մը որ զէպի մեզ կուգար: Երջապատեցինք զինքը եւ կեցուցինք: Քնացած էր, ու կը քալէր առանց զգուլու. այս՛, օրերով չքնացած ու յոգնած մարդերու կը պատահի ասիկա: Մարդը ծանօթ աւաղակ մըն էր զոր կատարութիւնը երկար ատենէ ի վեր կ'աշխատէր բանել, բայց չէր յաջողեր. այժմ ահա իր ստքովը թակարդին

մէջ կ'իյնար: Բռնեցիք զինքը ու խահուխանէն (*) բե-
րինք, մերկացնելով: Գիշերը, հսկելու կարգը ինձի եկաւ:
Ընկերներս քնացած էին: Կէս գիշերը անցած էր, ու ժա-
մանակս կը լրանար: Աւազակը մէկ կողմ խորունկ մը կը
քնանար: Գլխացի իրեն: Կամաց մը ձայն առի իրեն: Ըն-
կերներս կը խորգային: Երբ ժամանակս լրացաւ, ինձի
յաջորդելիք ֆարրաշ պահապանը արթնցուցի. ելաւ նըս-
տաւ, բայց նստած տեղն ալ կը կըլը. զայրացայ իրեն
զէմ, ու ազդարարեցի որ արթուն հսկելու էր, քանի որ
այն գիշերը կալանաւոր սննէինք: Յետոյ իմ տեղս քաշ-
ուեցայ, ու սուտ քուն եղայ: Քիչ վերջը աւազակը կա-
մաց մը վերցուց իր զէնքերը ու հեռացաւ. պահապան
ընկերս կը քնանար: Շատ չանցած՝ աղմուկ մը բրդաւ,
ֆարրաշները իրար անցան, ընկերս ձերբակալուեցաւ. ես,
թէեւ միշտ արթուն, խոր քուն մը կը կեղծէի: Ամէն ջանք
անօգուտ եղաւ. աւազակը փախած էր: Մեր ֆարրաշպա-
շին շատ չէր ցաւեր այդ փոխուստին համար, թէեւ պի-
տի զրկուել իր ստանալիք խաղաքէն՝ իր վարձք իր կա-
տարած կտրուածն: Ինչ որ է: Յաջորդ օրը խեղճ ըն-
կերս, պահապան ֆարրաշը, Ալա Ղարուն զլխատուե-
ցաւ: Բայց աւազակն ալ հարաւեցատա մէկը չեղաւ, վեր-
ջացուց ֆարրաշը. ընկերոջս զլխատուան օրը խի մօտս
եկաւ, եւ, է՛հ, վարձքս չմոռցաւ:

Ֆարրաշի պատմածէն տեսաք թէ անզոյշ պահա-
պանը զլխատուեցաւ: Ատ է Պարսկաստանի պատիժը.
երկար հարցաքննութիւններ, օրինական ձեւակերպու-
թիւններ չկան. ձերբակալուած յանցաւորը, մարդասպան,
աւազակ կամ եղեռնադործ, կը զլխատուի: Գողին ձեռ-
քը կը կտրուի, չարախօսին, հայհոյողին լեզուն, խողւա-
րարին ականջը սիւնի մը կը գամուի հրապարակով: Ինչ-
պէս ըսի արդէն, այս պատիժներէն ո՛չ մէկը քրիստոնէին
համար է: Կայ եւ յանցանքի քուտարան բանտ, զնտանը,
որ իր փտած հնութեամբ եւ տանջանքի գործիքներով
սարսափելի է: Մանաւանդ միսիւլան ժողովուրդը ամենա-
փոքր բողոքի մը հետեւանքով կը դատապարտուի կրել
այդ ահաւոր տանջանարանը: Շատ պարսիկներ կը ճանչ-
նամ որոնք Ա-Տ թուման պարտքի համար տարիներով
զօրիկ մնացած են արեւի լոյսէն:

Պարսից բանտի մասին խօսելով տխուր յիշատակներ
մէջս կ'արթնան: Այդ տաժանելի քաւարաններէն մէկ-եր-
կուրը անգամ մը այցելեցի: Վիրասլ մըն է, ուր սանդուխ-
ներով պէտք է իջնել, խոնաւ, թաց-թրջուելու աստիճան-,
մութ, զրկուած լոյսի ամենափոքր շառաւիղէ մը, այնպէս
որ խորշին երկաթեայ զրան բացուելը, ուսկից լոյսի նը-
շոյլ մը կը սպրդի, միտթարութիւն մըն է բանտարկեալին
համար: Եթէ միայն առ ըլլա՛ր սակայն զնտանի բնակչին
բաժինը: Կան տանջանքի եւ տառապանքի գործիքներ, ու-
րոնք կը սահմուկեն ականատեսը, իսկ զօհը շատ անգամ
կ'անդգոյացնեն ու կ'անշնչացնեն: Ժանգոտած շղթան իր

(*) Իւրաքանչիւր խումբ ֆարրաշ իր խահուխանէն
ունի, որպէս իրեն յատուկ կայարան:

հաստ ու կոշտ օղակներով 8-10 բանտարկեալ իրարու
կը կապէ, տաւարի լուծի նման. փայտեայ խաշիլան
որու վրայ հազիւ մարդու ափին լայնութեամբ ու բարձ-
րութեամբ ծակեր կան բացուած, բանտարկեալներուն ոտ-
քը իր մէջ կը կաշկանդէ, եւ երկաթեայ պաղ ձողով մը,
որու ծայրի կողպէքը օրը անգամ մը հազիւ թէ բացուի,
վզէն կապուած բանտարկեալը կատարեալ անշարժութեան
կը մատնէ թաց գետնին վրայ: Քիչնոտան, զոր ես բան-
տային ասպարանջան կ'անուանէի, հաստ ու կլոր փայտ
մըն է, բեւեռուած ընդ միշտ սաքի սլոքին շուրջը: Բան-
տարկեալներու կողքին դրուած են խուրձերով հաստ ճի-
պոտներ, որ կը ծառայեն երբեմն երբեմն թշուառին չոր-
ցած մարմինը կակղեցնելու:

— Աս տեսարանները ոչինչ բաներ են, ըսաւ ինձի
բանտապահը, հոս՝ բազդատմամբ ուրիշներու՝ բանտերնիս
շատ հանդիստ է: Եւ շատ մը բանտարկեալներ կը
բաղձան զէթ հոս փոխադրուիլ: Գնա՛ անգամ մը տե՛ս
Վ...ի, Ն...ի եւ Ղ...ի բանտերը, (Պարսկաստանի մէջ
մէն մի պաշտօնեայ իր առանձին բանտը ունի) տե՛ս թէ
անտեղուանքը ի՞նչ պժգալի տանջանքներ կան: Բանտար-
կեալը կը պակեցնեն քամակի վրայ, ձեռքերէն ու ոտքե-
րէն հակառակ ուղղութեամբ շղթաներով քաշելով ցիցե-
րու կը կապեն, ապա կարմրած շիշերով մարմինը կը խան-
ձեն, մինչեւ շատ անգամ փորոտիքը դուրս կը թափի.
յաճախ այդ բանտին մէջ մտնողին զիսկը՝ միայն դուրս
կ'ելլէ:

Տեսնելով Պարսից բանտը, մտքովս կը թռչէի դէպի
պատմական անցեալը, Փաւստոս Բիւզանդացիին գրած-
ները կը պատկերանային առջեւ եւ այդ մութ խորշին մէջ
կ'երազէի տեսնել Արշակ Բ. Հայոց սպարապետին յարգեայ
տիկը իր առջին կանգնած ծանր շղթաներու տակ կը
հառաչէր: ... Ամէն բան հին, ամէն բան նոյն, բանտա-
պահին հինա գրած երկար-կարմիր մօրուքն ալ նոյն, ինչ
որ էր պարբեր առաջ: Դ. վարէն հնութեան այդ հրէշու-
թիւնը անփոփոխ շարունակած էր իր գոյութիւնը:

Ահա՛ օրէնքը, ահա՛ պատիժը:
Վ. ՇԱՀԷՆԻ

ԱՍԻԱԿԱՆ ԹԻԻՐՔԻՈՅ ՄԷՋ
ՃՍՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԸ ՆՕԹԵՐ

Այս վերնագրին տակ՝ Անգլիոյ խորհրդարանին ան-
գամ լորտ Ուորքուրթը հոյակապ հատոր մը հրատարա-
կեց Լոնտոն այս օրերս: Լորտը մէկ քանի օրէ ի վեր, իր
մեծ-հօրը մահուամբը, Նորթհըմպթըրլէստի դուքսն է, ու
երիտասարդ պահպանողական կուսակցութեան մէջ առաջ-
նակարգ գիրք մը կը գրուէ: 1897ին անգլիացի երկու ե-
րեսփոխանի՝ Սըր Ջոն Սդիրլինկ-Մաքուէլի եւ Պ. Հոլ-

լէնտի հետ՝ ճամբորդութեան մը ձեռնարկեց Ասիական թիւրքիոյ մէջ: Կ. Պոլսոյ մէջ թիւրք իշխանութիւնները ամէն բան բրին՝ երեք երեսփոխանները ետ կեցնելու համար այդ ճամբորդութենէն, անցադրի դժուարութիւններ հանեցին. բայց ամէն ջանք անօգուտ մնաց: Անդիպացիները գերմանական երկաթուղիով, «որ ճշմարտապէս թիւրք եղանակով մը կը գործէ», Էնկիւրիւ գացին, թիֆլիքի այժերու քաղաքը որ, հիմակ երբ պրոնի մետաքսին նորածեւութիւնը անցած է, առաջուան եռանդովը չի բզբադիր այժերու բուծումովը: Էնկիւրիւն, փոխապրութեան ինչ միջոցներով որ կրցան դտնել, Սամսոն գացին, ու անկից, Տրապիզոնի ճամբով, Էրզրում ու յաջորդաբար Հասան-Քալէ, Խորասան, Չւլիւն, եւ Սողանլը Տաղէն Կարս, Սնի, Ալեքսանդրոպոլ, Արարատ լեռներուն մէջէն Պայազիտ, անկից Վան եւ Մուսուլ (Նինուս) ու աւելի վար, — յետոյ զարձան Տիարպէթի, Հալէպ, Իսկէնտէրուն, Մէրսին, Պէրութ, Կիպրոս եւ անկից Անդլիա: Ինչպէս կը տեսնուի, թիւրքիոյ գրեթէ ամբողջ շրջանը ըրին այսպէս, գրեթէ ամէն նահանգ այցելելով, եւ բուսական տեղ ալ յառաջանալով ոռոսական Հայաստանի մէջ, 1829էն եւ եւ 1878ին թիւրքիայէն խլուած մասերուն մէջ:

Իբր ճշմարիտ Անդլիացիներ, ամէն բանէ առաջ իրենց աչքին զարկածն է իրենց այցելած երկրին գերագոյն յարմարութիւնները եւ զայն կառավարողներուն ապիկարութիւնը եւ ընչաքաղցութիւնը: Հեղինակը, որ կը յայտնէ թէ իրեն ընկերացող երկու երեսփոխաններուն կարծիքն ալ կը ներկայացնէ, զիտոյ աչք մը ունի եւ խորքեղի զըրիչ մը: Իրողութեանց խորը չիջներ միշտ, բայց հաճ այն եզրակացութիւնը որուն կը հասնի եւ որ մեզի համար ամէնէն ուշագրաւ է. — Հայկական կոտորածները թիւրքիայէն խլած են իր փրկութեան վերջին խարխիւր, եւ անխուսափելի զարձուցած են բաժանում մը, որուն մէջ Արարատի հին թագաւորութիւնը, կամ Հայաստան, Ռուսերուն բաժինը պիտի բլլայ ե՛րբ որ ուզեն ու յարմար գտեն, թէպէտ ասիկա յառաջ պիտի բերէ ընդհանուր գժտութիւն մը, որ գուցէ առանց ընդհանուր պատերազմի մը չաւարտի:

Գրքին մէջ, որ 21 խոշոր ֆորպրայիտներով եւ ուրիշ բազմաթիւ պատկերներով զարդարուած է, ընտիր նկարագրութիւններ կան սրմաքանդակներու եւ հայկական եկեղեցիներու, եւ մասնաւորապէս Անիի աւերակներուն մասին, եւ պատկերներէն ոմանք շատ ճշգրիտ գաղափար մը կուտան հայ արուեստին այդ հրաշակերտներուն վըրայ: Ահա հատուած մը կարսի մասին. «Յաճ լիալուսնի մը շեղ ճառագայթները կը փառլիլին հոյակերտ ապառաժ-դղեակին եւ անոր ստորոտը գալարուող զետակին վրայ՝ երբոր կարս մտանք, ոռոսական զբաւման այդ գլխաւոր կեդրոնը, որ թատերաբեւը եղած է անդլիական վիւղազ-նութեան տարեգրութեանց մէջ անմոռանալի մաքառումի մը — Խրիմի պատերազմին ատեն զօրավար Ռիլերմոսի պաշտպանութեանը: Քաղաքը գրեթէ ուրիշ բան չէ բայց եթէ զինհալ բանակետոյ մը, եւ զինուորէ ուրիշ բանի չեն

հանդիպիր: Թիւրքիայէն եկողի մը աչքին կարելի՛ չէ որ չզարնէ ոռոս զօրագուններուն աշխուժութիւնը եւ վայելչութիւնը, եւ քիչ տեսարան այնքան ազգական է որքան զօրագունդի մը անցքը, երբ բոլոր զօրքերը, նուազախմբին ընկերակցութեամբ, ազգային երգը կ'երգեն: Ջինսուորնէրուն մեծ մասը կարճահասակ են, բայց ազէկ զինուած եւ սքանչելապէս մարդուած. ու եթէ երբեք թիւրքիա այսպիսի զօրութեան մը հետ պատերազմի ելլէ իր անկարող ու ողորմելիօրէն սպառազինուած Համիտիէ հեծելազօրքերուն խառնակ խումանովը, բնաւ թող յոյս մը չունենայ արդիւնքին նկատմամբ: Ամբութիւնները, որոնք վերջին պատերազմէն ի վեր մեծապէս բարւոքուած եւ ուժովցուած են, անշուշտ ցոյց չեն արուիր. եւ տեսնելու արժանի միակ բանն է հին եկեղեցին, որ լաւ վերանորոգուած է, եւ որ գրեթէ օրինակութիւնն է միեւնոյն ժամանակամիջոցի Անիի աւերակներուն որոնք կարսէն զէպի արեւելք 25 մղոն հեռու են: Այս աւերակները խիստ շահեկան են ոչ միայն իրենց զարմանալի տեսողութեամբը, այլ եւ այն պատմական յիշատակներովը, որոնք կը բղխին Հայկական հին թագաւորութեան այս կեդրոնէն:»

Հեղինակը կը խօսի կովկաս գաղթած եւ ոռոսական հպատակ եղած Հայերուն կացութեանը եւ ձգտումներուն մասին.

«Պէտք է գիտնալ որ Ռուսիա գաղթած Հայերը ոռոս պետութեան նկատմամբ իրենց բռնած դիրքովը երկու ուրոշ պատկարգի կը բաժնուին: Մէկ կողմը՝ Անգլիաէրները, որոնք խորապէս վիրաւորուած են իրենց կրթական գործին շուրջը ոռոս կառավարութեան հաստատած սեղ-մունքներէն, եւ որոնք, այն գաղափարին կառչած թէ կարելի է որ ապագային մէջ իրենց ազգը միութիւն մը ունենայ, աչքերնին Անգլիոյ զարձուցած են, իբր ներկայացուցիչը վեհանձն եւ լուսամիտ տեսութեանց. մինչգեո միւսը, Ռուսասեր կամ Ազատական կուսակցութիւնը, հաւատացած թէ ատիկա առ այժմ՝ անիրականալի երազ մըն է եւ թէ Ռուսիա միակ պետութիւնն է որ կարող է իրենց սահմանազխէն անդիի հաւատակիցները ազատել թիւրք բռնաւորութենէն եւ վատթար վարչութենէն, աւելի՛ տրամադիր են կարելի եղածին չափ յարմարելու ոռոս իշխանութեան: Երկու պատկարգերն ալ սակայն դառնապէս կը զանգատին այն վարմունքէն որուն ենթակայ են, եւ Անգլիոյ վասի միւս ազգաբնակիւթեանց մէջտեղ այնքան կը զգիացած որքան Ռուսերը, կենդանի բողոք մըն են կեդրոնացեալ զրութեան զեմ որ կարող է միայն ճնշել բայց ո՛չ իւրացնել: Աս է գլխաւոր պատճառը որ ոռոս պետութիւնը չուզեր փոքր-Ասիոյ մէջ ու եւ բարենորոգման գործադրութիւնը, որովհետեւ ատիկա կրնայ անկախ թագաւորութեան մը կօրիզը բլլալ կամ նոր միւում մը տալ յեղափոխական կուսակցութեան գործունէութեանը: Ռուսիա շատ քիչ ջանք ըրած է Հայերուն սիրցնելու այն զրութիւնը որուն տակ կ'ապրին: Հայերը՝ չուզելով վար գրուած մարդերու պէս են, եւ հոգ չի տարուիր այս իրողութիւնը ծածկելու: Դարերէ ի վեր թիւրքիոյ մէջ կառա-

վարութեան ընչաքացութեանը եւ ֆիրտերուն հարստա-
հարութեանցը ենթարկուած, զո՛նէ կրօնական ազատու-
թիւն կը վայելին մինչեւ վերջերս. բայց անոնք որ ու-
սական հոգը կրցան ապաստանիլ եւ յաջողեցան լրացնել
գաղթականներուն վրայ գրուած ծանր պայմանները, իրենց
նոր տանը մէջ ենթարկուեցան առջինէն աւելի քմահաճ
ու ճնշող միջամտութեան մը ու հոկարութեան մը: Առջի
բերան, բաւական թոյլտուութիւն չէօրհուեցաւ, և թէպէտ
կ'ենթադրուէր թէ իրենց տուած կրթութիւնը բարոյականի
և կրօնքի ուսուցումէն անկէն չէր անցնէր, սակայն զործնա-
կանին մէջ անոնք որ նախնական վարժարաններուն հինգ
պատարաններէն թեմական կղերանոցները կ'անցնէին,
շատ աւելի ընդարձակ կրթութիւն մը կը ստանային: Բայց
այս թոյլտուութիւնը նիւթապէս եւս առնուեցաւ տասներեք
տարի առաջ կայսերական ուքազով մը, որ կը հրամայէր
ոչ միայն ուսուերէն սորվեցնել, այլ կը պահանջէր որ ա-
մէն տեղ — բացի տարրական, այսինքն մէկ գասարան
ունեցող վարժարաններէն — գասաւանդութիւնը ուսուերէ-
նով կատարուէր: Յետոյ, բացի կղերանոցներէն որոնք մեր
աստուածաբանական վարժարաններուն կը համապատաս-
խանեն՝ հոգեւորականութեան պատրաստողներու հա-
մար, կառավարութիւնը ինքզինքին իրաւունք կուտար
հսկելու ամբողջ գասընթացքին եւ ծրագրերնորուն վրայ,
եւ՝ առանց հոգեւոր իշխանութեանց հաւանութեանը՝ ու-
զած ուսուցիչը արձակելու: Էջմիածինի մէջ մեզ հաւատ-
անցին թէ այս կանոնադրութեան հետեւանքը եղած է ինը
հարիւր զարօցի փակուած. եւ որչափ ալ բնական երեւի
լեզուի պատնէշը խորտակելու փափաքը, տարիա առաւե-
լութիւն մըն է զոր շատ երկիրներու մէջ շատ սուղ պիտի
գտնէին, քանի որ ընդհանուր կրթութիւնը կը խափանէ:»

Գոհնալով թիւրքիոյ, հեղինակը չի վարանիր յայ-
տարարելու թէ Փոքր-Ասիա աշխարհիս ամէնէն շահեկան
երկիրն է: Չայն ճանչնալու համար սակայն, մեծ համ-
բերութիւն ու յամուտութիւն պէտք է: «Երբոր անգամ մը
իր գոնէն ներս մտնէք, թիւրքը ձեռքէն եկածը կ'ընէ որ-
պէս զի հանդիստ ընէք, ու անկեղծօրէն ցաւիլ կը թուի
երբոր մեկնիք: Բայց ձեզի չի հրախրեր. ընդհակառակը,
կատեղեցնող միամտութեամբ մը կ'ընէ ձեզի որ նախամե-
ծար պիտի համարէր բնաւ երեսնից չափանել: Եթէ Պոնէկ
այցելուներ պիտի ունենայ, կը նախընտրէ որ Խնկիլիզ ըլ-
լան անոնք: Անոնց լեզուն չի հասկնար, բայց զանոնք
միւս բոլոր օտարներէն աւելի կը սիրէ, եւ, հետեւաբար,
յատկանշանական հակասութեամբ, կարելին ու անկա-
րելին կ'ընէ որպէս զի իրեն չ'մօտենան: Եթէ, ձեր ճամ-
բուն վրայ գրուած բոլոր պաշտօնական արգելքներուն հա-
կառակ, իր աշարջութիւնէն խոյս տաք, խրաւերին կը վե-
րագրէ ատիկա, և ձեզի կը նկատէ պատուական հիւր մը
զոր բոլոր սրտովը ըզձացած կը ասպնջականի:»

Լորտ Ուորքուրթը շատ ախորժելի կերպով կը նկա-
րագրէ իր պարտած բերրի ու նկարչագեղ վայրերը, բայց
տակից աւելի մեզի համար կարեւոր են իր կազմած զա-
ղափարը մարդերուն եւ կարգուսարքին վրայ: Ահա հատ-

ուած մը օսմանեան վարչութեան մասին.

«Հինգ տարի առաջ, Տիարպէրիբի շրջակայքը, հրա-
հանգիչ ու զուարճալի օրինակ մը պատահեցաւ տասա-
նորդի սուրբին հաւաքման եղանակին մասին: Վալին
պաշտօնեայ մը զրկեց սուրբը հաւաքելու գիւղի մը, որ
մինչեւ այդ ատեն 900 զրուշ միայն վճարած էր, թէեւ
ակնհերեւ էր որ ըստ օրինի շատ աւելի պարտաւոր էր վճա-
րելու: Վալին հասկցուց պաշտօնեային որ այդ տարուան
համար աւելի կարեւոր դուրսը մը գանձուլու էր: Ըստ
այսմ, երբոր հաշիւները փակուեցան, տեսնուեցաւ որ
այդ գիւղէն 9,000 զրուշի տուրք գանձուած էր: Կուտա-
կալը, փոխանակ գոհ ըլլալու որ իր հրամանը այս-
պէս ճշդիւ զորձադրուած էր, յայտարարեց թէ հաշիւին
մէջ սխալ մը ըլլալու էր, եւ երբոր պաշտօնեան՝ զարմա-
ցած՝ ազդուօրէն յայտնեց թէ սխալ չի կար, բանտ նետեց
գանի: Իր խցիկին մեհութեանը մէջ մէկ քանի ժամ մտա-
ծել յետոյ, բանտարկեալը հասկցաւ թէ ինչ էր իրմէ
ուզուածը, եւ մարդ զրկեց վալին ըսելու որ շատ կը ցա-
ւեր որ նշմարած չէր թիթիւ սխալ մը թուանշաններուն
մէջ: Մտքի տարօրինակ խանգարումով մը, նշանակեր էր
թէ 9,000 զրուշ ստացեր էր, մինչդեռ, անկասկած, իր-
ու զուրթիւնը ան էր որ 900 զրուշ միայն գանձած էր: Մար-
դը անմիջապէս բանտէն արձակուեցաւ. կառավարութեան
սնտուիը իր հին 900 զրուշը միայն ստացաւ, եւ վալին
զրպանեց 8,000ը, մնացեալ 100ը խելացի պաշտօնեային
չ'որհեցով:»

Հայկական ջարդերուն մասին խօսելով, լորտ Ուոր-
քուրթը հետեւեալ մանրակերպ կը պատմէ Էտհէմ փաշա-
յի, հեղինակն վերջին պատերազմին հերոսին մասին:
Երբ Էտհէմ փաշա Հալէպ կը գտնուէր, զրոյց ելաւ թէ
գաւազուութիւն մը սարքուելու վրայ կը ընդհանուր ջարդի
մը համար: «Անմիջապէս գլխաւոր մզկիթը գնաց, եւ
Գուրանը բանալով հաւաքուած բազմութեան առջեւ, հար-
ցուց թէ մէկը կրնա՞ր ցոյց տալ սուղ մը որ արգարացնէր
այդպիսի արարք մը: Ան ատեն, պատասխան չստանալով,
ըսաւ. «Իմ հրազէններս պիտի դարձնեմ առաջին մար-
դուն զեմ որ ձեռք վերցնէ ֆրիստոնեաներուն վրայ:»

Ընկերական բարձրագոյն աստիճաններուն պատկա-
նոց թիւրքերուն իսկ աներեւակայելի տղիտութեան մէկ
ապացոյցը տուած է հեղինակին Չիա պէյ անուն մէկը,
Մարաշի եւ Ալպիսթանի հին սուլթաններուն սերունդէն,
որ պաշտօնապէս ասպնջականած է երիտասարդ Լորտը և
իր ընկերները՝ Պոլազ քէօյի մէջ: «Խելքէ մտքէ շանցած
հարցումներ կ'ընէր մեզի — Անդլիա՞ն մեծ է թէ ոչ Լոն-
տոնը՝ որ Ֆրանսայի կը վերաբերի. թիւրք նաւատորմը՝
Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ միացեալ նաւատորմներէն
նրչափ անգամ մեծ է. կիներուն առանին հազուատին
նորաձեւութիւնը ո՞րն է: Չանագիր եղանք իրենհասկցնե-
լու թէ Ամերիկայի բնակիչները անգլիախօս էին, ու Անգ-
լիոյ չէին պատկաներ եւ թագաւոր չունէին: Ամենայն
վստահութեամբ կրնամ ըսել թէ, իր ծառաներուն ու
զրացիներուն հետ ծանրօրէն խորհրդակցել յետոյ, մեր

ըսածներուն ո՛չ մէկուն ալ հատաց, կատարեալ անկողմնակալութեամբ մը:»

Թիւրք պաշտօնեաներուն անբարոյականութեան ու կաշառակերութեան մասին խօսելով, հեղինակը կը կարծէ թէ յանցանքը ա՛լ աւելի կատարական դրութեանն է քան անհասներուն: «Ինչպէս կ'ուզէ որ պարկեշտ եւ ուղղամիտ մարդիկ զանազին պաշտօնի գլուխ: Բարձրաստիճան պաշտօնեայէն մինչեւ ամենայետին զապթիէն իր ծառայութեանը պատշաճ վարձքը չի ստանար, եւ հետեւաբար բնական է որ առաջինը նահանգին հասոյթէն վար կը գնէ իրեն պէտք եղածը, եւ զապթիէն ալ՝ ոտնակոխ ու ճնշուած ղեղացիներէն, երբոր անոնցմէ սուրբ հաւաքելու երթայ: Հաւանօրէն, Կ. Պոլսոյ բարձրաստիճան զանն է միայն որ կ'օգտուի իրերու այս վիճակէն որ կ'աղքատացնէ պետական դանձր եւ տեսական տոգոհութիւն մը կը սնուցանէ բանակին ամէն կարգերուն մէջ:»

Հայաստանի մէջ իսլամ մշտնանդութեան նոր պայթումներուն եւ նոր ջարդերուն մասին խօսելով, հեղինակը կ'ըսէ.

«Անգլիա մէկ անօրինութիւն մը միայն կրնայ ընել, որ, առանց ո եւ է օրինաւոր կասկած առթելու միւս պետութիւններուն, իրապէս պիտի նպաստէ իր սրտանց քստանձնած դատին, եւ ատով աջակից պիտի ըլլայ Թիւրքիոյ՝ յաղթահարելու համար գծուարութիւններու զորս նուազեցնելու համար Ռուսիա բան մը քրած չունի: Թող Անգլիա ղինուորական պաշտօնեայ մը կարգէ իրը հիւ պատու Ռուսիոյ մէջ, հրահանգ տալով անոր որ սահմանադրին վրայ չորս աչքով հսկէ, եւ երբոր կասկածելի մարդիկ երեւան գան այդ կողմերը, անմիջապէս պէտք եղած տեղը իմացնէ: Այդ կերպով, Վանի նահանգին խաղաղութեան սպաննացող էն վտանգաւոր պատճառներէն մին մէջտեղէն կը վերնայ:»



Բայց այս գրքին գլխաւոր արժէքը այլո՛ր է, իր քաղաքական տեսութեանցը մէջ, որոնց վրայ մանաւանդ ծանրացան Անգլիոյ կարեւորագոյն լրագրիները, ի նկատ առնելով մասնաւորապէս հեղինակին անունը եւ գիրքը: Ահաւաստիկ արեւելեան ու հայկական հարցին վերաբերող գլխաւոր էջերէն մին.

«Տարակոյս չի կայ թէ Թիւրքիոյ արդի դրութիւնը անկեղծօրէն բարեփոխելու համար, անհրաժեշտ է որ աւելութիւնները պնդեն որ կուսակալներու անուանմանը վրայ հսկողութիւն մը ունենան, անհրաժեշտ է որ կուսակալները լաւ գինուած եւ կանոնաւորապէս վճարուած ոտակահանութիւն մը ունենան՝ ուղղակի իրենց հրամանին տակ, եւ նոյնպէս անկանոն զօրքը բնաւ չգործածուի խողութիւնները նուաճելու:

«Ռուսիա բացէ ի բաց ցոյց տուաւ թէ պիտի ընդգլխմանայ խնդրին այս միակ կարելի լուծմանը: Թիւրքիա երբեք պիտի չուզէ իր տունը իր ձեռքովը կարգի գնել,

բացի եթէ ճնշում բանեցուի իրեն վրայ. ու երբոր այդ ճնշումը ի գործ դրուի, ինչպէս օր մը պիտի ընէ Ռուսիա, նպատակը լոկ եսասիրական պիտի ըլլայ: Ռուսիա սպասելու ժամանակ ունի: Թիւրքիա օրէ օր տկարանալու վրայ է, Միտիպոմանները օր օրի աւելի գոգոհ, Քրիստոսեանները հեազհեաւ աւելի համակիր ու եւ է փոփոխութեան որ ամենագոյնը թեթեւացման յոյս մը ներշնչէ իրենց: Հայաստանէն անդին կը տարածուի Եփրատի ու Տիգրիսի լայն հովիտը, որ, քաղաքակիրթ պետութեան մը ձեռքին մէջ, նորէն պիտի ծաղկէր ինչպէս Դրախտը, եւ որ անշուք հարստութեան աղբիւր մը պիտի ըլլար իր տիրոջը եւ գիրին ճամբայ մը զէպի Պարսից ծոցը: Անգլիա կրնայ զայրոյթէն փրփրել ու մխալ, բայց իր ահարկու անոյեանին (Ռուսիոյ) յառաջխաղացութիւնը կեցնելու ամէն յոյս լքած է գրեթէ, եւ եթէ օր մը անոր հետ պատերազմի բռնուի, ատիկա Հնդկաստանի սահմանադրին վրայ է որ տեղի պիտի ունենայ: Հետեւաբար, Ռուսիոյ պետական մարզիկը անարգել կ'աշխատին իրենց երազին իրականացմանը, որ է կայսրութիւն մը որ իր հիւսիսային կեդրոնէն իր հսկայ թեւերը երկնցնէ՝ իսլամական ու չինական հոգեվարք ազգերուն մէջէն՝ մինչեւ Արաբական ու Դեղին ծովերուն ափունքը: Երբոր ատոր իրականացման վերջին քայլը առնելու ժամանակը գայ, այն ատեն, ե ո՛չ անկից առաջ — բացի եթէ իր պորձունէութիւնը փութացնող կամ կասեցնող այնպիսի գեղեցիկ պատահին զորոնք ոչ ոք կրնայ գուշակել — Ռուսիա պիտի քաղէ պատուը այն ցարտ ու հաշուող քաղաքականութեան, որ նախաձեռնար համարեց թող սալ որ Հայաստանը սպանդանոց մը դառնայ, քան թէ ընդունի որ օտար մրցակից մը (Անգլիա) իրեն հետ մասնակից ըլլայ թեւաբարութեան մը, նոյն իսկ առժամեայ ու անուանական թեւաբարութեան մը, այն սահմաններուն մէջ զոր ինք իր սեփականութիւնը կը նկատէ:»

Յուսալից խօսքեր չեն ասոնք մեզի համար, մանաւանդ պահպանողական երեսփոխանի մը բերնին մէջ, քանի որ մինչեւ հիմա Անգլիոյ պահպանողականներուն աւանդական քաղաքականութիւնը եղած է ամէն միջոցներով ընդդրմանալ Ռուսիոյ յառաջխաղացութեանը Թիւրքիոյ՝ մէջ: Յառաջաբանին մէջ, երիտասարդ գուքը աւելի բացայայտ կերպով կը պարզէ իր տեսութիւնը հայկական խնդրին ապագային մասին.

«Այսօր ընդհանրապէս Անգլիացիները կը զգան թէ Պիքոնֆիլտի քաղաքականութիւնը (այսինքն Թիւրքիան Ռուսիոյ դէմ պաշտպանելը) այլ եւս կարելի չէ պատուաւորապէս շարունակել, առանց զայն փոփոխելու: Չենք ալ կրնար այս գագուտը գատապարտել իրր յուսահատութեան ծնունդ: Այդ գղացուրը մասամբ յառաջ եկած է այն խզի խոյթէն թէ եթէ Անգլիա՝ իր իսկ շահուն համար՝ բնաւ միջամտած չըլլար Թիւրքիոյ ամբողջութիւնը պահպանելու, Հայերը շատոնց է որ կեանքի ապահովութիւն եւ կրօնքի թոյլատուութիւն պիտի վայելէին քաղաքակիրթ պետութեան մը (Ռուսիոյ) ներքեւ. միւս կողմէն,

այդ զգացման ծնունդ տուած է սա պատմական իմաստա- սիրութիւնը թէ ո՛չ միայն անբարոյականութիւն այլ եւ զուր ջանք է փորձել կասեցնել վերջնական քայքայումը Թիւրքիոյ պէս երկրի մը, որուն աստիճանական անկումը բնական հետեւանքը կը թուի իր վարիչներուն անտարա- կուսելի ապիկարութեանը եւ ազականութեանը:

«Կրնայ ըլլալ — և ես կը հաւատամ որ այդպէս է — թէ այդ խղճի խայթը հիմնաւոր չըլլայ, եւ Թիւրքիոյ ա- պագային մասին այդ գոշակութիւնը անշուշտ տարակու- սելի է: Բայց երբեք կարելի պիտի չըլլայ հանրային խըղճ- մտանքին վրայ տպաւորուած ազդեցութիւնը ջնջել՝ ջար- դերուն համար ճարտար չըմեղանքներ մէջտեղ դնելով, ոչ ալ հասկցնել թէ Աստուծոյ — Հունդարիոյ քայքայման ոչ- անհաւանական պարագային մէջ՝ Թիւրքիա դեռ կարող է իր ոյժը ի գործ դնել, իր սուրը մերկացնելով Եւրոպայի այս կամ այն զինուորական մեծ պետութեան ի նպաստ: Անգլիացիներուն այս զգացմանը դէմ ա՛լ բա՛ն մը օգուտ չընեն, ո՛չ իսկ մեր Կ. Պոլսոյ մեծագոյն զեպանին ըրած այն ազգաբարութիւնը թէ Հնդկաստանի համար ինչ ըս- պաւանալիք մը պիտի ըլլայ եթէ թող տանք որ Ռուսիա հաստատուի Պարսից Ծոցը տանող ճամբուն վրայ:

«Խնդիրը հիմակ ան չէ թէ արգարութիւն է որ քրիս- տոնեայ ստուարաթիւ ժողովուրդ մը մեր ետական շահե- րուն զոհենք (այսինքն թող չտանք որ Ռուսիան Հայաս- տանը զրուէ), այլ թէ մեր այդ գոհողութիւնը նպաստա- ւոր պիտի ըլլայ Հայերուն որոնց բարեկեցութեանը հա- ւաքաբար հսկելու յանձնառու եղան Պերլինի Դաշնագիրը ստորագրողները: Հայաստանի նկատմամբ Ռուսիոյ քա- ղաքականութեան բնութեանը եւ նպատակին մասին այլ եւս ո եւ է տարակոյս չի կայ:»

Աշխատեցայ կարելի եղածին չափ որոշ ու մեկին կեր- պով հեղինակին զազափարը ներկայացնել այստեղ: Կ'ու- ղէի այս անտութեան եզրակացութիւնը հանել, բայց լա- ւապէս կը համարիմ այդ զործը թողուլ Անգլիոյ մէջ հայ- կական դատին էն կրակոտ պաշտպանին՝ արմատական «Տէլլի ֆրոնթլը»ի, որ կ'ըսէ.

«Պիքոնոֆիլիի քաղաքականութիւնը անպանալի կեր- պով ջնջուած է, եւ լորս Ուրբաւըրթ չի փորձեր սրանալ ասիկա, թէպէտ կը խոստովանի որ Թիւրքերուն համակիր է: Մենք ալ համակիր ենք, եթէ Թիւրք ըսելով կը հասկնայ միւսիւմաններուն զանգուածը որոնք քրիստոնեաներուն չափ կը ճնշուին, առանց ալ յոյս ունենալու թէ Եւրոպան պիտի միջամտէ ի նպաստ իրենց: Այսպէս, հեղինակին կար- ծիքով, անկարելի է արգելել Հայաստանի զբաւումը Ռու- սերէն եւ՝ ատոր հետեւանքով՝ Հայկական եկեղեցիին են- թարկումը Օրթոտոքս եկեղեցիին տիրապետութեանը, բացի եթէ սուլթանը եւ իր փաշաները «անկեղծ ու պար- կեշտ ճիգ մը ընեն արմատէն խլելու իրենց կառավարա- կան զրութեան ամէնէն աչքի զարնող շարիքները:» Եթէ այսպէս ընելու ըլլան, կ'ըսէ հեղինակը, «կրնան դիւրա- ցնել Անգլիոյ եւ Թիւրքիոյ միջեւ վերահաստատումը բա- րեկամական համաձայնութեան մը, սրը միայն կարող է

արգելել Թիւրքիոյ վերջնական զբաւումը եւ Անգլիոյ ալ անխուսափելի ընդհարումը իր Ասիական Կայսրութեան մրցակիցներուն ամէնէն մեծին եւ ամէնէն ահարկուին հետ:» Այսպէս ուրեմն հեղինակին մէջ գեռ Պիքոնոֆիլ- տէն բան մը մնացած է: Դեռ կը կաբձէ կար — ու՛ առաջ՝ իր գատողութեանը վրայ կը տարակուսինք — թէ Թիւր- քիոյ մէջ ճշմարիտ բարենորոգում մը կարելի է սրջափ առնել որ սուլթանը եւ իր արքանեակները ազատ օդ կը շնչեն: Անշուշտ հայկական լիոնագաշտերուն վրայ Ռու- սիոյ տիրապետութիւնը կրնայ շատ ազիտաբեր ըլլալ մեր Հնդկաստանի շահերուն, բայց Գերմանիա այժմ կա- րող է ընդգիմանալ ձարին չափազանց յառաջխաղացու- թեանը՝ եթէ Քայզերը կամենայ. մնաց որ, ո՛չ իսկ մեր «նուիրական» շահերուն համար կրնանք այսուհետեւ պաշտպան կանգնել այդպիսի փտած ու անարգ կառավա- րութեան մը, որուն արարքները կը նկարագրէ մեզի նոյն ինքն լորտ Ուրբաւըրթ, ատով ցոյց տալով թէ նոյն իսկ էն թունդ պահպանողականներուն համար անգամ Թիւր- քին մասին ուրիշ բան չի կայ ընելիք բայց եթէ յուսալ որ հրաշքով մը Հապէշը իր մարթին գոյնը փոխէ կամ յովա- զը՝ իր կաշիին խայտաբղէտութիւնը, Հետեւանքները ինչ ալ ըլլան, Անգլիոյ խղճմասնքը ա՛լ չի ներեր որ այսու- հետեւ նեցուկ կանգնի օսմանեան կառավարութեան: Այս բացէ ի բաց խոստովանութիւնը զխաւար արկէն է այս գրեթէ:»

Լ. ԶԱՐԹՈՒՄԵԱՆ

ՌՈՒՄԻԱ ԵՒ ԹԻՒՐԿԻԱ

Քիչերի թղթակիցը կը գրէ Կ. Պոլսէն.

Թիւրքերէն Աերլէթ լրագիրը, որ պաշտօնին բերանն է, Ֆիլիպէ հրատարակուող Կայրէթէն արտասուած էր յօդուած մը որ, Կրեաէի մասին սուլթանին քաղաքակա- նութիւնը փառաբանելով հանդերձ, ծանր խօսքեր կը բու- վանպակեր ընդդէմ՝ չորս պետութիւններուն եւ մասնաու- րապէս Ռուսիոյ, զոր կ'ամբաստանէր իբր առաջնորդը ինչպիսի տրուած լուծումին եւ զլիաւորապէս թիւրք զօր- քերուն կղզիէն հեռացուելուն: Աերլէթէն բաւական օրի- նակ հրապարակ ելած էր երբոր պաշտար, եղելութիւնը իմանալով, անմիջապէս արգելել տուած թերթին տարա- ծումը եւ խմբագրատունը ոստիկանական հսկողութեան տակ անուկեցաւ: Այս յօդուածին հրատարակութիւնը մեծ զարմանք պատճառեց, ի նկատ անելով կանխարշել խիստ զբաքննութիւնը: Բայց ամէնը աս չէ: Ռուսական զեպա- նատունը պաշտաւէն պահանջեց Աերլէթի ջնջումը, եւ թերթը խափանուեցաւ, բայց հազիւ մէկ քանի ժամուան համար, սրովհետեւ երկրորդ իրատէ մը ելաւ որ թերթին արտօնութիւն կուտար հրատարակութիւնը շարունակելու, այնպէս որ լրագիրն մէկ թիւէն միւսը ընդհատում տեղի չունեցաւ: Կ'ըսուի թէ Թ. Գ. իր պէյ, Աերլէթի հրատարա-

կիչը եւ տէրը, իրաւէին հետ կայսերական բարեւոյնները ընդունեց:

Հիմա կը սկսի այս միջադէպին էն արտասովոր մասը, որ շատ մեկնութիւններու առիթ կուտայ այստեղ: Մոնի-զէօր Օրիանդալ, որ Ռուսիոյ թերթն է Կ. Պոլիս, բացա-յայտօրէն ուսական զեւպանատունէն ներշնչուած յօդ-ուած մը հրատարակեց ջրելու համար թիրբ թերթին ը-սածները: Այդ յօդուածը բաց է բաց կը հերքէ Ռուսիոյ զէմ եղած յարձակումները, եւ ցոյց կուտայ թէ Սէրվիթ յանիրաւի կը պարսաւէ պետութիւն մը որ օսմանեան կայսրութեան հետ լաւագոյն յարաբերութիւնները կը առ-ծէ եւ որ, երբեմն երբեմն, շօշափելի ապացոյցներ տուած է թիրբիոյ համար անկեղծ բարեկամութեանը: «Եթէ Կրետական ինդրին մէջ պետութիւն մը կար որ ո՛չ մի-այն հաշտարար այլ բարեկամական տրամադրութիւններ ցոյց տուաւ թիրբիոյ մասին, ան ալ Ռուսիան էր: Երբ ուրիշ պետութիւն մը, զոր հարկ չկայ անուանելու, կը բազմար գործը ծայրայեղութեան նմանիլ, Բեղրպուրիի կառավարութիւնը՝ օսմանեան կայսրութեան անխոս պահ-պանման սկզբունքին անբնաբարելի հանդամանքը մէջ-տեղ զրաւ: Կրետէի մէջ Ռուսիոյ բռնած վարժուցը արա-մաբանական եւ բնական շարունակութիւնը եղաւ թիր-բիոյ նկատմամբ անկեղծ բարեկամութեան քաղաքակա-նութեանը, որուն միշտ հետեւած է Նիքոլա ձարին կա-ռավարութիւնը: Ինչ ինչ պարագաներու մէջ, որոնք մոռ-ցուելու չափ հին չեն, Ռուսիոյ մերժումը չէ՞ր որ թիր-բիոյ թշնամիներուն թող չտուաւ գործադրել թիրբիոյ զէմ մտադրած ծրագիրներն:»

Հա՛րկ է ըսել թէ ակնարկութիւնը Անգլիոյ մասին է երբոր յիշեալ յօդուածին մէջ կը խօսուի Կրետաի ինդրը մինչեւ ծայրը տանիլ բազմացող պետութեան մը մասին: Բայց այդ պաշտօնական յօդուածին ամենէն ուշադրաւ կէտը այն մասն է որ կը յայտնէ թէ քիչ ժամանակ առաջ (այսինքն հայկական ջարդերուն առեմ) Ռուսիոյ մերժումն էր որ արզիւնց թիրբիոյ հակառակորդներուն մտադրած ծրագիրներուն գործադրութիւնը: Ասիկա լաւ ի միտ առ-նելու է, որովհետեւ բաց է բաց ցոյց կուտայ թիրբիոյ մէջ ուս քաղաքականութեան խարխիւր, մանաւանդ որ այդ ակնարկուած ժամանակին՝ կենթադրուել թէ Ռուսիա Անգլիոյ եւ Ֆրանսայի հետ համաձայն կը զորժէր: Առա-ջին անգամն է որ Ռուսիոյ բռնած զիրքը հրապարակ կը հանուի, եւ առ ալ Կ. Պոլսոյ թերթի մը մէջ: Նմանապէս զիտել կը արուի, իբր օրինակ ուս զիւանագիտութեան գործելու եղանակին, թէ մինչ Աթէնքի մէջ Ռուսիա Կրե-տէի ազատարարը կը ներկայանայ, այստեղ Կ. Պոլիս անխոնջ ճիւղեր կը թափուին ցոյց տալու թէ Ռուսիա թիր-բիոյ լաւագոյն բարեկամն է եւ թէ Ռուսիա օսմանեան կայս-րութեան շահերը կը պաշտպանէ:

* * *

Տէյի Նիւզի մէջ կը կարդանք.
«Նովոսթի Կ. Պոլսոյ թղթակիցը, որ կը հաւաստէ թէ ամենաստոյգ աղբիւրէ քաղած է իր տեղեկութիւնները,

կ'ըսէ թէ Երւսրդ Քէօշկի պալատական կուսակցութիւնը ակնկէտ կը սպասէ Անգլիոյ եւ Գերմանիոյ միջեւ մերձեց-ման մը յայտարար ամէն նշաններուն: Պ. Չամպրէյնի բանախօսութիւնները վէքֆիլաի մէջ եւ Պ. Ֆոն Պիւլովի ճառը Բայնսոյակին մէջ՝ անմիջապէս թարգմանուեցան սուլթանին համար: Ապտիւլ Համիտ պատրաստ է մտնա-լու Անգլիայէն կրած բոլոր վերաւորանքները, եթէ զինքը Գերմանիոյ հետ ձեռք ձեռքի տեսնէ: Թիրբիոյ բարեկա-մական ընդառաջումները՝ Ռուսիոյ հետ աւելի որսապին համաձայնութեան մը գալու համար, պաղուծեամբ ըն-դունուեցան, թէեւ ստիպողաբար կրկնուեցան վերջին մէկ քանի ամիսներս: Ապտիւլ Համիտ Ռուսիոյ գաղտնի զի-տաւորութեանց վախովը կը տաքնապի, բայց չի հաւա-տար թէ Գերմանիա մէն միայնակ կարող ըլլայ այնչափ աշակցել իրեն որ թիրբիա կարենայ բացէ ի բաց զէմ զնիլ Ռուսիոյ: Եթէ Գերմանիան ու Անգլիան միասին իր քովն ի վեր ունենայ, սուլթանը անմիջապէս Ռուսիոյ հանդէպ պիտի բռնէ զիրք մը բարբառի տարբեր այն զիր-քէն զոր հիմակ ստիպուած է բռնելու:

«Եթէ ասիկա ստոյգ է, կը յարէ Տէյի Նիւզ իր կող-մէն, պարզապէս ցոյց կուտայ թէ Ապտիւլ Համիտ նորէն փափաքող է իր սիրական խաղը խաղալու, որ է պաշտ-պան պետութիւն մը կամ պետութիւններ հանել ուրիշի մը զէմ: Ճշմարիտ է որ սուլթանը ձանձրացած է այն սողացող զիրքէն զոր ժամանակէ մը ի վեր ստիպուած է բռնելու հանդէպ Ռուսիոյ:»

* * *

Սրսնուարտի կը հեռագրեն թէ Ռուսիա կողմատի մէջ իր զօրքը հետզհետէ աւելցնելու վրայ է: Կովկասի զօր-քերուն սովորական թիւն է 180,000. բայց այսօր 300 հազարի կը հասնի անոնց թիւը:

* * *

Կ. Պոլսէն թուայնդին. «Բաղէշի եղեռնապատ առեա-նը մահուան դատապարտած ըլլալով Հայ մը որ կը յայ-տարարէ թէ ինք Ռուսիոյ հպատակ է, ուստական զեւպա-նատունը հրամայեց Գրան բեկանել վճիռը:»

ՀԱՍՏԷՆՆԻ ԻՆ ԲԱՆՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեզին ղրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.

Տարեկան առթիւ, կը խնդրենք մեր բաժա-նորդներէն որ հաճին ՓՈՒԹՈՎ իմացնել մեզ թէ կ'ու-զեն վերանորոգել իրենց բաժանորդագրութիւնը:

Կը յիշեցնենք միանգամայն թէ պէտք է բաժնեզին-ները ղրկել մեզ ԿԱՆՏՈՒԿ՝ առաքման մէջ ո եւ է ընդհա-տում տեղի չունենալու համար: